ՏԵՂԵԿԱՆՔ

ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

/2007 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ/

ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՆՔ

2007 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- **<u>Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության</u> միջև տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողով**

1. Ռուսաստանյան ռազմակայանին վարձակալության հիմունքներով հողամասերի և անշարժ գույքի հանձնման և ընդունման հայ-ռուսական միջպետական հանձնաժողով

Հանձնաժողովի հայկական մասի անհատական կազմը հաստատվել է ՀՀ Նախագահի 2000թ. փետրվարի 26-ի թիվ ՆՀ-489 հրամանագրով (հանձնաժողովի հայկական մասի նախագահ՝ ՀՀ ԶՈՒ ԳՇ պետ - պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, գեներալ-գնդապետ Ս.Օհանյան): ՀՀ Նախագահի 2000թ. օգոստոսի 23-ի թիվ ՆՀ-653 հրամանագրով կատարվել են փոփոխություններ:

Մինչ այժմ տեղի է ունեցել հանձնաժողովի վեց նիստ: Վերջին 6-րդ նիստը կայացել է 2006թ. սեպտեմբերի 25-28-ը Երևանում:

Հանձնաժողովի շրջանակներում ստեղծվել է օպերատիվ-տեխնիկական աշխատանքային խումբ: Խմբի հայկական մասի ղեկավարը ՀՀ պաշտպանության նախարարության կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետ, գնդապետ Ա.Սարգսյանն է: Խումբն ամենամյա նիստեր է գումարում, որոնց ընթացքում ամփոփվում են կատարված աշխատանքի արդյունքները, համաձայնեցվում են դիրքորոշումները և նախանշվում հետագա քայլերը:

Խմբի հերթական նիստն անցկացվելու է 2007թ. հուլիսի 13-ին:

Ի կատարումն հանձնաժողովի 6-րդ նիստի որոշումների՝ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է հետևյալ աշխատանքը.

«ՔԿՄԱ», «Դրուժբա» և «Սպորտ» օբյեկտները ՀՀ տարածքում ռուսաստանյան ռազմակայանի Երևանի կոմունալ շահագործման մասի հաշվեկշռին ժամանակավոր անհատույց օգտագործման համար փոխանցելու նպատակով դրանց ռեսուրսների

հաշվառման սարքավորումներ տեղադրելու և «ԲԿՄԱ» հանրակացարանի ինժեներական կոմունիկացիաների նորոգման ՀՀ ՊՆ պարտավորությունների մեծ մասը կատարվել է, մնացածի կատարումն ընթացքում է, մասնավորապես՝

- բոլոր հանրակացարաններում տեղադրվել են էլեկտրաէներգիայի հաշվառման սարքեր, բնակիչները (բացառությամբ «ԲԿՄԱ» հանրակացարանի մի քանի բնակիչների, ովքեր առայժմ հրաժարվում են էլեկտրաէներգիա մատակարարող կազմակերպության հետ որպես առանձին բաժանորդներ պայմանագրեր կնքել) ձևակերպվել են որպես առանձին բաժանորդներ,
- ջրաչափերի տեղադրման աշխատանքների նախագծա-նախահաշվային փուլն ավարտվել է, համապատասխան կազմակերպության հետ կնքվել է պայմանագիր, համաձայն՝ աշխատանքը կավարտվի սեպտեմբերի վերջին,
- «ԲԿՄԱ» հանրակացարանի ինժեներական կոմունիկացիաները, այդ թվում զուգարանների և ցնցուղարանների նորոգման աշխատանքն սկսվել է և շուտով ավարտին կհասցվի:

«ԲԿՄԱ» հյուրանոցում բնակված փախստականների տարհանումն ավարտվում է: Տարհանվել է նաև նույն շենքի առաջին հարկում տեղակայված ՀՀ ՊՆ զորամասի շտաբը, ինչի արդյունքում ռուսական կողմի համար առաջանում է լրացուցիչ բնակմակերես:

«ԲԿՄԱ» հանրակացարանի հիմնական և ընթացիկ նորոգման աշխատանքները պետք է իրականացնի ռուսական կողմը: Դրանց իրականացումից հետո հանձնաժողովը կքննարկի հանրակացարանները ռուսական կողմի անհատույց օգտագործմանը հանձնելու հարցը:

ՌԴ պաշտպանության նախարարության մանկական նախադպրոցական հիմնարկ ստեղծելու համար հողատարածք և շինություն տրամադրելու նպատակով, որպես տարբերակ, ՀՀ-ում ՌԴ զինված ուժերի մարտական ղեկավարման խմբի պետ, գեներալ-մայոր Ա.Զինովևի հետ ունեցած հանդիպման ընթացքում ՀՀ պաշտպանության նախկին նախարար Ս.Սարգսյանն առաջարկել է ռուսական կողմին անհատույց օգտագործման տրամադրել թիվ 16 պոլիկլինիկայի շենքի վերակառուցման նպատակով ռուսական կողմից հովանավոր գտնելու պարագայում վերակառուցման ծախսերի քառորդ մասն իրականացնել ՀՀ ՊՆ միջոցների հաշվին:

«Էրեբունի» օդանավակայանում ռուսաստանյան ռազմակայանի օդանավերի օդանավերի կայանման համար հատկացված հողամասը ռուսական կողմի անհատույց օգտագործմանը հանձնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի մշակման նպատակով հայկական կողմն իրականացրել է չափագրման և այլ անհրաժեշտ աշխատանքը և համապատասխան փաստաթղթերը համաձայնեցման նպատակով փոխանցել ռուսական կողմին:

Ի կատարումն ՀՀ տարածքում ռուսաստանյան ռազմակայանի գտնվելու հետ կապված ծախսերի հաշվարկման և մարման կարգի՝ մինչև ընթացիկ տարվա հուլիսի 20-ը հաջորդ տարվա համար ռուսաստանյան ռազմակայանի կողմից սպառվող ծառայությունների (էլեկտրաէներգիայի, գազի, ջրամատակարարման և ջրահեռացման) համաձայնեցված լիմիտը հաստատելու նպատակով ռուսական կողմն ավարտում է համապատասխան հաշվարկները և առաջիկա օրերին համաձայնեցման նպատակով կներկայացնի հայկական կողմին:

Հանձնաժողովի հերթական նիստը կանցկացվի 2007թ. 3-րդ եռամսյակում Երևանում:

2. **ՀՀ և ՌԴ միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողով**

Հանձնաժողովի հայկական մասի անհատական կազմը հաստատվել է ՀՀ վարչապետի 2000թ. հունիսի 20-ի թիվ 373 որոշմամբ, այնուհետև ՀՀ վարչապետի 2001թ. մարտի 6-ի թիվ 178, 2002թ. հունիսի 21-ի թիվ 379-Ա, 2003թ. մայիսի 30-ի թիվ 249-Ա, 2005թ. հոկտեմբերի 15-ի թիվ 804-Ա և 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1027-Ա որոշումներով կատարվել են փոփոխություններ (հանձնաժողովի հայկական մասի նախագահ՝ ՀՀ պաշտպանության նախարար Ս.Սարգսյան, պատասխանատու քարտուղար՝ ՀՀ կառավարության աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ Գ.Խոսրոև):

Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել հանձնաժողովի համանախագահների հանդիպում (2007թ. մարտի 5-ը, Մոսկվա):

Համանախագահների հանդիպման ընթացքում քննարկվել են հետևյալ հարցերը.

Պայմանագրաիրավական բազայի վիճակի և զարգացման վերաբերյալ

Հանդիպման ընթացքում համանախագահներն անդրադարձան միջկառավարական և միջպետական համաձայնագրերի շրջանառվող նախագծերի համաձայնեցման գործընթացի վիճակին:

Համանախագահները պայմանավորվեցին կողմերի համապատասխան գերատեսչություններին հանձնարարել ակտիվացնել համաձայնագրերի նախագծերի համաձայնեցման և ստորագրման նախապատրաստման աշխատանքը:

Հայկական կողմը ծանուցեց ՀՀ Կառավարության 2006թ. նոյեմբերի 23-ի N 1929-Ն որոշման համապատասխան Գյումրիում ՌԴ Գլխավոր հյուպատոսության տեղակայման նպատակով ՌԴ-ին 49 տարով անհատույց օգտագործման համար հողամաս հանձնելու և ՌԴ Գլխավոր հյուպատոսության շենքի շինարարությանն աջակցելու նպատակով ֆինանսական միջոցներ հատկացնելու վերաբերյալ:

Կողմերը համաձայնեցին հավասարության սկզբունքով Հայաստանի և Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցչությունների տեղակայման համար անշարժ գույք հատկացնելու պայմանավորվածությունների կատարման նպատակով կողմերի արտաքին գործերի նախարարություններին հանձնարարել նշված անշարժ գույքի հատկացման կոնկրետ պայմանները որոշելու համար մեկամսյա ժամկետում անցկացնել փորձագետների հանդիպում, մշակել համապատասխան միջպետական համաձայնագրի նախագիծ և կատարված աշխատանքի մասին զեկուցել հանձնաժողովի 9-րդ նիստին:

Ի կատարումն նշյալ հանձնարարականի՝ 2007թ. հունիսի 20-ին Երևանում տեղի ունեցավ փորձագետների հանդիպում, որի արդյունքում, հաշվի առնելով կողմերի նկատողություններն ու առաջարկությունները՝ ստորագրվեց համապատասխան արձանագրություն:

Փորձագետներն ամրագրեցին կողմերի ցանկությունը Մոսկվայում/դեսպանություն/ և Գյումրիում /գլխավոր հյուպատոսություն/ առանձնացված հողատարածքները հանձնել վարձակալման՝ արտոնյալ պայմաններով 49 տարի ժամկետով, միաժամանակ նշելով, որ կողմերը կարող են քննարկել նաև 99 տարի ժամկետով վարձակալման տարբերակը:

Գյումրիում շենքի կառուցման ֆինանսավորման հարցում ռուսական և հայկական կողմերի միջև եղած տարաձայնությունները նույնպես ամրագրվեցին արձանագրության տեքստում՝ հետագայում նոր քննարկման առարկա դառնալու ակնկալիքով:

Վերջում փորձագետները որոշեցին հանդիպել հաջորդ անգամ 2007թ. օգոստոսին Մոսկվայում:

Երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունների վիճակի և զարգացման հեռանկարների վերաբերյալ

Համանախագահները բավարարվածությամբ նշեցին 2005թ. համեմատությամբ 2006թ. ընթացքում ՀՀ և ՌԴ միջև ապրանքաշրջանառության աճի, փոխադարձ առևտրի տվյալների վիճակագրական համադրման նպատակով 2006թ. սեպտեմբերի 16-19-ը կողմերի մաքսային մարմինների միջև հանդիպման արդյունքների, Հայաստանում տիեզերական մոնիտորինգի կենտրոն ստեղծելու խնդրի լուծման դրական ընթացքի, ՀՀ և ՌԴ միջև մինչև 2010թ. երկարաժամկետ տնտեսական համագործակցության ծրագրի իրականացման պլանի ճշգրտման վերաբերյալ տեղեկատվությունն ի գիտություն ընդունելու, ինչպես նաև համագործակցության հեռանկարային նոր ուղղությունների՝ բազմա և միաբյուրեղ կայծքարի արտադրության և իրավաբանորեն նշանակալի տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ անդրսահմանային էլեկտրոնային համագործակցության կազմակերպման նախագծի մասին:

Համանախագահները պայմանավորվեցին համապատասխան գերատեսչություններին կոնկրետ հանձնարարականներ տալ վերը նշված ուղղություններով համագործակցությունը զարգացնելու և կատարված աշխատանքի մասին 9-րդ նիստին զեկուցելու վերաբերյալ:

Պետական պարտքի մարման դիմաց Ռուսաստանի Դաշնությանն ի սեփականություն հանձնված Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների աշխատանքի վերաբերյալ

Կողմերը, ձեռնարկությունների արդյունավետ գործունեության ապահովման ենթահանձնաժողովի շրջանակներում Ռուսաստանի Դաշնությանն ի սեփականության հանձնված Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների արդյունավետ գործունեությանը խոչընդոտող խնդիրների լուծման առաջնային միջոցառումների պլանի կատարման նպատակով կատարվող աշխատանքին անդրադառնալով, ռուսական կողմին

հանձնարարեցին պլանի կատարման աշխատանքն արագացնելու նպատակով երկամսյա ժամկետում Հայաստան ուղարկել ռուսական փորձագետների խումբ: Ենթահանձնաժողովի համանախագահների 2006թ. հոկտեմբերի 6-ի աշխատանքային հանդիպման արձանագրության համաձայն՝ ի գիտություն ընդունվեց ռուսական տեղեկատվությունը, որ վեջինս շարունակում է նշված ձեռնարկությունները դաշնային համապատասխան նպատակային ծրագրում ներառելու միջոցով դրանց բեռնվածությունն ավելացնելու աշխատանքը:

Համանախագահները պայմանավորվեցին ռուսական կողմին հանձնարարել երկամսյա ժամկետում մշակել ձեռնարկությունների բիզնես ծրագրերի նախագծեր և դրանք ներկայացնել ենթահանձնաժողովի համանախագահների հերթական նիստին, իսկ ենթահանձնաժողովի համանախագահներին հանձնարարել 2007թ. մայիսին անցկացնել ենթահանձնաժողովի հերթական նիստ և կատարված աշխատանքի մասին զեկուցել հանձնաժողովի 9-րդ նիստին:

Վառելիքաէներգետիկ համալիրի բնագավառում համագործակցության վերաբերյալ

Կողմերը նշեցին գազաէներգետիկ ոլորտում ակտիվ համագործակցության մասին, անդրադարձան երկկողմ էներգետիկ ծրագրերին և գործընթացներին, հայկական ատոմակայանի արդյունավետության բարձրացման ցուցանիշներին, Հայաստանում նոր ատոմակայանի կառուցմանը, որտեղ ռուսական կողմը պատրաստ է հանդես գալ որպես կազմակերպիչ, նախագծող, համադրող և գլխավոր կապալառու, ինչպես նաև Հայաստանում ուրանի հումքային բազայի զարգացման և ուրանի հարստացման միջազգային կենտրոնում /Ռուսաստան, ք. Անգարսկ/ Հայաստանի մասնակցության շահագրգռվածության մասին:

Համանախագահները պայմանավորվեցին համապատասխան հանձնարարականներ տալ կողմերի համապատասխան գերատեսչություններին՝ նշված ոլորտներում համագործակցության զարգացման նպատակով անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ:

Տրանսպորտի և կապի բնագավառում համագործակցության վերաբերյալ

Հայկական կողմը ծանուցեց, որ 2007թ. փետրվարի 13-ին ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության ու «Ռեզերվդ Քափիթալ էնթերփրայզես Քորպ.» կորպորացիայի միջև

կնքվել է Կովկաս-Փոթի-Կովկաս երկաթուղալաստանավային ուղիղ հաղորդակցության կազմակերպման մասին փոխըմբռնման հուշագիր, և լաստանավի շահագործման նպատակով ռուսական կողմը շուտափույթ պետք է լուծի Կորպորացիայի Կովկաս նավահանգստի կառանատեղում գտնվող լաստանավային կամրջի օգտագործման թույլտվություն տալու հարցը: Ռուսական կողմին հանձնվեց Նովոռոսիյսկ-Փոթի-Նովոռոսիյսկ ավտոմոբիլալաստանավային հաղորդակցության կազմակերպման աշխատանքային խմբի հայկական մասի կազմը առաջին նիստը հնարավորինս կարճ ժամկետում Երևանում անցկացնելու մասին: Քննարկվեց նաև ոլորտի վերաբերյալ շրջանառվող միջազգային պայմանագրերի համաձայնեցման գործընթացը: ՀՀ Կառավարության և ՌԴ Կառավարության միջև ՀՀ տարածքում ռուսական հեռուստառադիոհեռարձակման կազմակերպությունների ծրագրերի ընդունման և տարածման կարգի մասին 1997թ. հուլիսի 1-ի համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին արձանագրությունը նպատակահարմար չհամարվեց կնքել՝ պայմանների փոփոխման հետևանքով:

Համանախագահները պայմանավորվեցին, որ ռուսական կողմը մինչև 2007թ. մարտի 15-ը կտեղեկացնի Կորպորացիային թույլտվություն տալու հնարավորության մասին՝ կապված մինչև 2007թ. ապրիլի 5-ը լաստանավը գործարկելու հետ: Ռուսական կողմը մոտակա ժամանակահատվածում պետք է տեղեկացնի Նովոռոսիյսկ-Փոթի-Նովոռոսիյսկ ավտոմոբիլալաստանավային հաղորդակցության կազմակերպման աշխատանքային խմբի ռուսական մասի կազմի մասին, որից հետո կողմերը կպայմանավորվեն խմբի նիստի անցկացման տեղի և ժամկետի վերաբերյալ:

Հայկական կողմը նաև նշեց «Վերին Լարս» - «Կազբեգի» անցակետի փակման հետ կապված իր մտահոգությունը և հույս հայտնեց, որ ռուսական կողմը միջոցներ կձեռնարկի դրա գործառման վերականգնման նպատակով:

Հանձնաժողովի ռուսական կողմի նախագահը կարծիք հայտնեց, որ Կովկաս-Փոթի-Կովկաս երկաթուղալաստանավային ուղիղ հաղորդակցության պայմաններում ռուսական կողմը կդիտարկի և շահավետ լինելու դեպքում կիրականացնի 2012 թվականի օլիմպիական խաղերի անցկացման հայտ ներկայացրած ՌԴ Սոչի քաղաքում իրականացվելիք լայնամասշտաբ շինարարական աշխատանքների համար հայկական շինանյութ օգտագործելու և դրանով իսկ լաստանավի լիաբեռնումն ապահովելու գործընթաց:

Հումանիտար բնագավառում համագործակցության վերաբերյալ

Կողմերն արձանագրեցին Ռուսաստանում Հայաստանի տարվա միջոցառումները ծրագրին համապատասխան իրականացվելու փաստը, Հայաստանի և Ռուսաստանի միջև մշակույթի, կրթության և գիտության, սպորտի և սեյսմիկ պաշտպանության ոլորտներում առաջընթաց զարգացումը, նշված ոլորտներում իրականացված միջոցառումներն ու ձեռքբերումները, ինչպես նաև հետագա զարգացման հնարավորություններն ու իրականացվելիք գործընթացները, ծրագրերն ու խնդիրները:

Վերոհիշյալ բոլոր հարցերի քննարկման արդյունքները և դրանց շուրջ ձեռք բերված պայմանավորվածություններն ամրագրվեցին հանդիպման արձանագրությամբ:

Համանախագահները պայմանավորվեցին հանձնաժողովի 9-րդ նիստն անցկացնել 2007թ. սեպտեմբերին Երևանում:

3. Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև ռազմատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողով

Հանձնաժողովի հայկական մասի կազմը հաստատվել է ՀՀ վարչապետի 2003թ. դեկտեմբերի 23-ի թիվ 659-Ա որոշմամբ (հանձնաժողովի հայկական մասի ղեկավար՝ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ, գեներալ-լեյտենանտ Յու.Խաչատուրով):

Ի կատարումն հանձնաժողովի 3-րդ որոշումների, հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է հետևյալ աշխատանքը.

Պայմանագրաիրավական բազայի զարգացման նպատակով ռուսական կողմին հայտնվել է ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև ռազմական նշանակության արտադրանքի երրորդ երկրներ արտահանման ընթացքում փոխգործակցության մասին համաձայնագրի նախագծի համաձայնեցման համապատասխան ներպետական ընթացակարգերն ավարտելու և ստորագրմանը պատրաստ լինելու մասին, սակայն դեռևս պատասխան չի ստացվել:

Հայաստանի Հանրապետության արդյունաբերական ձեռնարկություններում ՌԴ 102-րդ ռազմակայանի սպառազինության և ռազմական տեխնիկայի վերանորոգման կազմակերպման նորմատիվ-իրավական հարցերի կարգավորման նպատակով 2007թ. ապրիլի 16-20-ը ՀՀ ՊՆ փորձագետների խումբ է այցելել ՌԴ «Մուրոմտեպլովոզ» ձեռնարկություն, որտեղ իրականացվել է վերանորոգման կազմակերպման հնարավորությունների փորձի փոխանակում և քննարկվել են ռազմատեխնիկական համագործակցության համապատասխան հարցեր:

Ռազմական նշանակության արտադրանքի մատակարարման ապահովման նպատակով ընթացիկ պաշտոնական գրագրություն է իրականացվել ռուսական կողմի հետ ՌԴ-ից ՀՀ ներկրվող ռազմական նշանակության արտադրանքի տարանցման խոչընդոտները հարթելու նպատակով ուսական կողմից ստացված ՌԴ համապատասխան օրենսդրական բազան և դրա վերաբերյալ պաշտոնական պարզաբանումները ՀՀ պաշտպանության նախարարի կարգադրությամբ տրվել են ՀՀ ՊՆ համապատասխան ստորաբաժանումներին:

Հանձնաժողովի հերթական նիստը կանցկացվի 2007թ. 3-րդ եռամսյակում Երևանում:

4. **ՀՀ և ՌԴ միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի շրջանակներում ստեղծված ՀՀ տարածքում ՌԴ ԶՈՒ զինվորական կազմավորումների գտնվելու հետ կապված ՀՀ ծախսերի հաշվարկների մեխանիզմի մշակման ուղղությամբ համատեղ աշխատանքային խումբ**

Խմբի հայկական մասի անհատական կազմը հաստատվել է ՀՀ վարչապետի 2003թ. նոյեմբերի 21-ի թիվ 596-Ա որոշմամբ (աշխատանքային խմբի հայկական մասի ղեկավար՝ ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետ, գնդապետ Ա.Սարգսյան):

Հաշվետու ժամանակահատվածում հանդիպում տեղի չի ունեցել:

- **Տնտեսական համագործակցության <u>հայ-ամերիկյան</u> միջկառավարական հանձնաժողով**

ԱՄՆ պետական դեպարտամենտի Եվրոպային և Եվրասիային ԱՄՆ օժանդակության համակարգող, հայ-ամերիկյան միջկառավարական հանձնաժողովի համանախագահ Թոմաս Ադամսը, հաշվի առնելով ս.թ. մայիսին Հայաստանում կայանալիք խորհրդարանական ընտրությունները, ս.թ. մարտի 30-ի գրությամբ առաջարկել է որպես հայ-ամերիկյան միջկառավարական հանձնաժողովի 2007թ. գարնանային նիստի անցկացման այլընտրանք դիտարկել է ս.թ. ամռանն՝ իր այցելությունը Հայաստան և հանդիպումը նոր ձևավորված կառավարության անդամների հետ: Հայկական կողմը ներկայացված առաջարկն ընդունել է:

Հայ-ամերիկյան միջկառավարական հանձնաժողովի հերթական՝ 13-րդ նիստը նախատեսվում է անցկացնել 2007թ. հոկտեմբերի 21-ին:

- **Հայաստանի Հանրապետության և <u>Իրանի Իսլամական Հանրապետության</u> միջկառավարական հանձնաժողով**

Ս.թ. հունվարի 31-ից փետրվարի 1-ը Թեհրանում տեղի է ունեցել հայ- իրանական կապերի կոորդինացման միջկառավարական հանձնաժողովի վեցերորդ համատեղ նիստը: Նիստը գլխավորում էին հանձնաժողովների համանախագահներ՝ ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար պրն. Ա. Թումանյանը և ԻԻՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար պրն. Դ. Ջաֆարին:

Նիստի արդյունքում ստորագրվել են հետևյալ փաստաթղթերը.

1. «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության Կառավարության միջև կրթական և մշակութային կենտրոնների հիմնման և գործունեության պայմանների մասին» Փոխըմբռնման հուշագիր:

2. «Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության կապերի կոորդինացման միջկառավարական հանձնաժողովի վեցերորդ համատեղ նիստի մասին» Փոխըմբռնման հուշագիր:

3. «Հայաստանի Հանրապետության հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի և Իրանի Իսլամական Հանրապետության ռադիոհեռուստատեսության կազմակերպության միջև» Փոխըմբռնման հուշագիր:

ՀՀ Վարչապետի ս.թ. մարտի 7-ի թիվ 164-Ա որոշմամբ փոփոխություն է կատարվել հայ- իրանական միջկառավարարական համատեղ հանձնաժողովի հայկական մասի

կազմում: Հանձնաժողովի համանախագահ է նշանակվել ***<u>ՀՀ էներգետիկայի նախարար պրն. Արմեն Մովսիսյանը:</u>***

Ս.թ. ապրիլի 12-ից հայ-իրանական միջկառավարական համատեղ հանձնաժողովի իրանական մասի պատասխանատվությունը ստանձնել է ԻԻՀ ԱԳՆ , իսկ քարտուղարության աշխատանքները համադրելու է ԱՊՀ երկրների 1-ին վարչությունը:

Հանձնաժողովի համանախագահ է նշանակվել ***<u>ԻԻՀ ԱԳ նախարար պրն. Մանուչեհր Մոթթաքին:</u>***

<u>ՀՀ արտաքին գործերի նախարարություն</u>

Տարվա ընթացքում տեղի են ունեցել ԻԻՀ /փետրվարի 14-ին/ և ՀՀ /դեկտեմբերի 17-ին/ արտգործնախարարների աշխատանքային փոխայցելությունները: Արտաքին գերատեսչությունների ղեկավարները երկու երկրների քաղաքական վերնախավի հետ հանդիպումների և բանակցությունների ընթացքում բարձր են գնահատել երկկողմ առկա հարաբերությունների մակարդակը, որակել են գոյություն ունեցող ներուժը, հնարավորություններն ու կարողությունները, դրանք օգտագործելու անհրաժեշտությունը: Երկկողմ օրակարգին զուգահեռ քննարկվել են տարածաշրջանային երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր, նախանշել ապագա համագործակցության խնդիրները:

2006թ. Թեհրանում և Երևանում կայացել են նաև ՀՀ և ԻԻՀ արտգործնախարարությունների հյուպատոսական ծառայությունների համատեղ երկրորդ /հունվարի 16-18-ը/ և երրորդ /նոյեմբերի 21-22-ը/ նիստերը: Արդյունքում ստորագրվել են համապատասխան Փոխըմբռնման հուշագրեր:

Հաջորդ նիստը նախատեսվում է անցկացնել Թեհրանում՝ ժամկետները ճշտվում են:

<u>ՀՀ էներգետիկայի նախարարություն</u>

4-1 Կետը կրում է դեկլարատիվ բնույթ և փաստում համագործակցության անհրաժեշտությունը:

4-2 ՀՀ Նախագահը 06.03.2006թ. N ՆՀ-48-Ն հրամանագրով հաստատել (վավերացրել) է «Հյուսիս Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքի մասին միջկառավարական համաձայնագիրը: Իրանի Իսլամական Հանրապետության արքատին գործերի նախարարությունը տեղեկացրել է, որ 03.04.2006թ. Հայաստանի Հանրապետությունը պաշտոնապես միացել է «Հյուսիս-Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքի մասին միջկառավարական համաձայնագրին:

4-3 2006թ. հոկտեմբերի 16-19-ը Երևանում կայացել է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության և Իրանի Իսլամական Հանրապետության ճանապարհների և հաղորդակցության նախարարության ներկայացուցիչների հանդիպում: Հանդիպման ընթացքում քննարկվել է Հայաստանի և Իրանի միջև ուղիղ երկաթուղային կապ ստեղծելու հնարավորության հարցը: Հանդիպման ընթացքում ստորագրվել է Փոխըմբռնման հուշագիր, համաձայն որի Կողմերը պայմանավորվեցին 6-ամսյա ժամկետում քայլեր ձեռնարկեն յուրաքանչյուրն իր երկրի տարածքում նախագծի տեխնիկա-տնտեսական հիմնավորման ուսումնասիրությունները կատարելու և

արդյունքները միմյանց մինչև դիվանագիտական ուղիներով փոխանակելու համար: 02.05.2007թ. ՀՀ արտաքին գործերի նախարարության միջոցով իրանական կողմին փոխանցվել է Հայաստան-Իրան երկաթուղու շինարարության նախագծի տեխնիկատնտեսական հիմնավորումը: Իրանական կողմից նշված նախագծի տեխնիկատնտեսական հիմնավորում առ այսօր չի ստացվել:

4-4 2006թ. ապրիլի 5-ի թիվ 01-10/1469 գրությամբ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը դիմել էր ՀՀ արտաքին գործերի նախարարությանը՝ Հուշագրի 4-4 կետի վերաբերյալ իրանական կողմի կոնկրետ առաջարկներ ստանալու հարցում միջնորդություն ցուցաբերելու համար: Միայն 2006թ. հունիսին իրանական կողմը ներկայացրեց երկաթուղու ոլորտում փորձի փոխանակման իր առաջարկությունը: Այդ նպատակով իրանական կողմը խնդրել է ներկայացնել տեղեկություն Հայաստանի Հանրապետության երկաթգծի, վագոնների, շոգեքարշերի արտադրության և վերանորոգման, երկաթգծային տարբեր մեքենասարքավորումների պահանջարկի, կարողությունների և հզորությունների վերաբերյալ, ինչպես նաև վերոհիշյալ բնագավառում ՀՀ ապագա ծրագրերի, ՀՀ կրթական կարողությունների, ուսումնական կենտրոններ բացելու հնարավորությունների վերաբերյալ: ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը իրանական կողմի հարցադրումը ներկայացրել է «Հայկական երկաթուղի» ՓԲԸ-ին:

4-5 2006թ. դեկտեմբերի 11-ից 14-ը ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության նախաձեռնությամբ Երևանում կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև ավտոմոբիլային տրանսպորտի հարցերով համատեղ հանձնաժողովի առաջին նիստը: Նիստի արդյունքում Կողմերի միջև ստորագրվել է Փոխըմբռնման հուշագիր (պատճեն 18.12.2006թ. թիվ 02-10/5312 գրությամբ ներկայացվել է ՀՀ արտաքին գործերի նախարարություն): Համատեղ հանձնաժողովի հերթական նիստը տեղի կունենա Իրանի Իսլամական Հանրապետությունում:

4-6 Ճանապարհի կառուցումն ու շինարարական աշխատանքները դեռևս ընթացքում են և նախատեսվում է դրանք ավարտել մինչև 2007թ. ավարտը:
4-7
4-8
4-9 Նշված հարցը ընդգրկվել է նաև 2006թ. դեկտեմբերի 11-ից 14-ը Երևանում կայացած Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև ավտոմոբիլային տրանսպորտի հարցերով համատեղ հանձնաժողովի առաջին նիստի օրակարգում: Դեռևս նման հանդիպման անհրաժեշտություն չի առաջացել:
4-10
4-11 2006թ. հոկտեմբերի 16-19-ը Երևանում կայացել է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության և Իրանի Իսլամական Հանրապետության ճանապարհների և հաղորդակցության նախարարության ներկայացուցիչների հանդիպում, որի օրակարգում ընդգրկվել էին նաև փոխադրումների գործընթացի արագացման և դյուրացման հարցերը:
4-12 Խնդիրը վերաբերում է ավիացիայի ոլորտին՝ իրավասու մարմինը ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունն է:
4-13 Համապատասխան գրություն է ուղարկվել «ԱրմենՏել» ՀՁ ՓԲԸ: Հարկ է նշել նաև, որ հայկական «ՓայբրՆետ» և իրանական «Զիրսախտ» ընկերությունների միջև ստորագրվել է Հայաստան-Իրան օպտիկամանրաթելային մալուխի միացման հնարավորությունների քննարկման հարցերով Փոխըմբռնման հուշագիր: Կողմերի միջև

առ այսօր կազմակերպվել է երկու հանդիպում: Ներկայումս նշված հարցը գտնվում է բանակցային փուլում:

4-14

<u>ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն</u>

6-րդ նիստի Փոխըմբռնման հուշագրի դրույթների կատարման ընթացքը.

1-1. ՀՀ-ի և ԻԻՀ-ի միջև առևտրատնտեսական համագործակցության զարգացման ամրապնդման, ընդլայնման, ինչպես նաև ներդրումների ներգրավման նպատակով ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության հրավերով 2006թ. նոյեմբերի 13-19-ը տեղի ունեցավ Իրանի Իսլամական Հանրապետության առևտրի նախարարության պաշտոնական պատվիրակության և մի խումբ գործարարների այցը Հայաստան: Այցի ընթացքում ձեռք բերվեցին մի շարք պայմանավորվածություններ առևտրատնտեսական համագործակցության զարգացման ուղղությամբ, որոնք որպես դրույթներ ամրագրվեցին «Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև առևտրի, մարկեթինգի և ներդրումների ոլորտում համագործակցության մասին» Փոխըմբռնման Հուշագրում: Այցի շրջանակներում «Կոնգրես» հյուրանոցում տեղի ունեցավ ԱԱՊ-ի կողմից կազմակերպված գործարար համաժողով, որին մասնակցեցին իրանական և հայկական գործարար շրջանի 180 ներկայացուցիչներ:

Համաժողովին մասնակցել էին նաև ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի տեղակալ՝ հայ-իրանական կապերի կոորդինացման միջկառավարական հանձնաժողովի անդամ պրն Ա.Պետրոսյանը, Հայաստանում ԻԻՀ արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ.Ալիռեզա Հաղիղիանը, Իրանի առևտրի զարգացման կազմակերպության աջակցման և կառավարման գծով տեղակալ պրն Ֆ. Աֆխամին, ՀՀ Առևտրաարդյունաբերական պալատի, Արդյունաբերողների և գործարարների միության և ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության այլ ներկայացուցիչներ:

1-1 Իրանական կողմը հայկական կողմին ներկայացրեց «Ազատ առևտրի մասին» Համաձայնագրի նախագիծը, և պարտավորվեց մեկ ամսվա ընթացքում բավարար տեղեկատվություն ներկայացնել արտաքին առևտուրը կարգավորող օրենսդրության վերաբերյալ: Հայկական կողմն այն ստանալուց հետո երկու ամսվա ընթացքում կներկայացնի իր առաջարկությունները Համաձայնագրի վերաբերյալ, որից հետո կողմերը դիվանագիտական ուղիներով կշարունակեն բանակցությունները՝ «Ազատ առևտրի մասին» Համաձայնագրի վերջնական համաձայնեցման նպատակով:

Նախարարությունը հետամուտ լինելով նշյալ կետի կատարմանը և հաշվի առնելով երկկողմ պայմանավորվածությունների կարևորությունը, Փոխըմբռնման Հուշագրով նախատեսված ժամկետում իրանական կողմից տեղեկատվություն չստանալով, 3.03.06թ N05-12/8-196 գրությամբ ԱԳՆ-ի միջոցով դիմել էր Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ալիռեզա Հաղիղիանին: Նախարարությունը, պատասխան չստանալով, կրկին անգամ 10.04.06թ N05-12/8-335 գրությամբ ԱԳՆ-ի միջոցով դիմել էր Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանին՝ ակնկալելով աջակցություն իրանական կողմից արտաքին առևտուրը կարգավորող օրենսդրության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու հարցում: Անհրաժեշտ տեղեկատվությունը ստացվել է միայն 2006թ հունիսի 20-ին ՀՀ ԱԳՆ-ի N10/07700 գրությամբ:

Մանրազնին ուսումնասիրելով իրանական կողմից ներկայացված Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին առևտուրը կանոնակարգող օրենսդրությունը, նախարարությունը ՀՀ ԱԳՆ-ին 24.10.06թ N01-12/6-1381 գրությամբ ներկայացրել է իր հարցադրումները վերջինիս օրենսդրության վերաբերյալ:

Գրությամբ հայտնվել է, որ օրենսդրության որոշ դրույթներ լուրջ խոչընդոտ կարող են հանդիսանալ երկու երկրների միջև ազատ առևտրի ռեժիմի կիրառման գործում, մասնավորապես հաշվի առնելով այն, որ իրանական կողմից ներկայացված «Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև ազատ առևտրի մասին» Համաձայնագրի նախագիծը այդ դրույթների լուծումը չի տալիս: Այն է՝

- յուրաքանչյուր տարի Իրանի արտաքին առևտրային օրենսդրության մեջ կատարվող փոփոխությունները (ԻԻՀ արտահանումն ու ներմուծումն կանոնակարգող Ակտի Հոդված 4),
- Իրանում գործող թույլտվությունների և արտոնագրերի գործող համակարգը (ԻԻՀ արտահանումն ու ներմուծումը կանոնակարգող Ակտի Հոդված 8):

Միաժամանակ պարզաբանման կարիք ունեին նաև օրենսդրության այլ դրույթներ: Մասնավորապես՝ իրանական կողմից կիրառվող ապրանքների ծագման երկրի որոշման կանոնների առանձնահատկությունները և այլն:

2006թ-ի նոյեմբերի 13-ից 19-ը տեղի ունեցած Իրանի Իսլամական Հանրապետության առևտրի նախարարության պաշտոնական պատվիրակության այցի շրջանակներում ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունում կայացավ հանդիպում ԻԻՀ Առևտրի նախարարության Ամերիկայի, Եվրոպայի և ԱՊՀ երկրների գլխավոր վարչության պետ պրն Ա.Ասադիանի հետ, որի ընթացքում քննարկվեցին «Ազատ առևտրի» Համաձայնագրին առնչվող հարցեր:

Հանդիպման ընթացքում ներկայացվեցին երկու երկրների արտաքին առևտուրը կանոնակարգող օրենսդրությունները: Արդյունքում ձեռք բերվեց պայմանավորվածություն՝ 1-2 ամսվա ընթացքում միմյանց ուղղել լրացուցիչ պարզաբանում պահանջող հարցեր և տրամադրել դրա վերաբերյալ ակնկալվող տեղեկատվությունը:

Նախարարությունը 14.02.2007թ N05-18/8-129, 03.04.07թ N05-18/8-296 և 21.05.07թ N05-18/8-296 գրություններով ԱԳՆ-ի միջոցով դիմել է Իրանի Իսլամական Հանրապետության առևտրի նախարարությանը՝ Իրանի արտաքին առևտրի օրենսդրության որոշ դրույթների վերաբերյալ պարզաբանում և տեղեկատվություն ստանալու համար, նկատի ունենալով, որ պահանջվող տեղեկատվությունը թույլ կտա հայկական կողմին, մինչև բանակցություններ սկսելը առավել խորությամբ ուսումնասիրել հայկական ապրանքների Իրան ներմուծման առկա խոչընդոտները, մշակել առաջարկներ դրանց վերացման ուղղությամբ:

Սակայն պահանջվող տեղեկատվությունը իրանական կողմից ստացվել է միայն վերջերս ՀՀ ԱԳՆ -ի 11.06.07թ. N 10/07194 գրությամբ, ինչը ներկայումս գտնվում է քննարկման փուլում:

1-2 Իրանի Իսլամական Հանրապետության ԱՀԿ-ին անդամակցության շրջանակներում հայկական կողմից խորհրդատվական աջակցություն, ինչպես նաև իրանական կողմից ԱՀԿ-ին անդամակցության վերաբերյալ պարբերաբար տեղեկատվություն չի տրամադրվել, քանի որ ԻԻՀ ԱՀԿ-ին անդամակցության Աշխատանքային խումբը ստեղծվել է 2005թ. մայիսի 26-ին և այս ընթացքում Աշխատանքային խմբի որևէ հանդիպում չի կայացել: Իրանը դեռևս ԱՀԿ-ին չի ներկայացրել Արտաքին առևտրային ռեժիմի Հուշագիրը և հետևապես անդամակցության բուն գործընթացը դեռևս չի սկսվել:

1-4. ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունում կայացել է խորհրդակցություն Արդյունաբերողների և գործարարների միության գործադիր տնօրեն Գ.Մակարյանի և ՀՀ Գործարարների հետ, որի արդյունքում ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ հայկական կապիտալով Իրանում ընկերություն հիմնելու ուղղությամբ, որի միջոցով և կիրականացվեն հայկական ապրանքների ներմուծումը Իրանի Իսլամական Հանրապետություն: Սակայն նշված հարցին կարելի է անդրադառնալ միայն Իրանում օտարերկրյա ներդրումներով ձեռնարկության հիմնադրումը կանոնակարգող օրենսդրական դաշտը ուսումնասիրելուց հետո: Նախարարությունը 14.02.07թ N05-18/8-129 գրությամբ նշված հարցի առնչությամբ դիմել է իրանական կողմին տեղեկատվություն ստանալու համար:

1-5. Հայկական կողմը իրանական կողմին ԱԳՆ-ի միջոցով 24.08.06թ. N 05-12/8-800 և 29.12.06թ. N 05-18/8-1238 գրություններով, ինչպես նաև անմիջականորեն իրանական կողմին է փոխանցել Հայաստանի համապատասխան օրենսդրական փաթեթը:

1-6.

2006թ. մայիսի 11-ից 15-ը Իրանի Իսլամական Հանրապետության Մազանդարան նահանգում տեղի ունեցավ ՀՀ արդյունաբերական ներուժը ներկայացնող առաջին մասնագիտական ցուցահանդեսն ու հայ-իրանական գործարար համաժողովը: Համաժողովի ընթացքում հայ և իրանցի գործարարների միջև կնքվեցին մեկ տասնյակից ավելի պայմանագրեր: Այդ միջոցառման շրջանակներում՝ 2006թ. մայիսի 13-ին Մազանդարան Նահանգի Սարի քաղաքում կնքվեց նաև Փոխհամագործակցության Հուշագիր ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի և ԻԻՀ Մազանդարան նահանգի առևտրաարդյունաբերական և հանքերի պալատի միջև:

Հուշագրում ընդգրկված են մի շարք ոլորտներ, մասնավորապես՝

- առևտրային համագործակցություն
- զբոսաշրջություն
- համատեղ ներդրումային հիմնադրամի ստեղծում
- մասնագիտացված ցուցահանդեսների կազմակերպում

2006թ նոյեմբերի 4-ից 11-ը Իրան Հայաստան համատեղ առևտրական պալատի նախաձեռնությամբ Հայաստանի Հանրապետությունում կազմակերպվեց իրանական շինանյութերի ոլորտը ներկայացնող մասնագիտացված ցուցահանդես, որտեղ ներկա էին Իրան-Հայաստան առևտրական պալատի նախագահ պրն.Լ.Ահարոնյանը, ՀՀ ԱԱՊ-ի նախագահ պրն Մ.Սարգսյանը և մի շարք այլ պաշտոնատար անձինք:

2006թ-ի դեկտեմբերին ԻԻՀ Թավրիզ քաղաքի առևտրաարդյունաբերական և հանքերի պալատի ու ՀՀ առևտրաարդյունաբերական Պալատի հետ համատեղ նախատեսվում էր Երևանում կազմակերպել գորգերի ցուցահանդես, սակայն այն հետաձգվեց մինչև 2007թ-ի վերջը:

2007թ ընթացքում նախատեսվում է կազմակերպել հայ-իրանական երկրորդ գործարար համաժողով «Ներդրումային Հայաստան» խորագրով:

Իրանի Իսլամական Հանրապետության Ատրպատական նահանգի միջազգային ցուցահանդեսների ընկերության կողմից տրամադրվել է տեղեկատվություն 2007թ մարտից մինչև 2008թ մարտը կազմակերպվելիք ցուցահանդեսների վերաբերյալ, ինչը և տրամադրվել է համապատասխան ՀՀ շահագրգիռ կազմակերպություններին (Զարգացման հայկական գործակալություն, ՀՀ առևտրաարդյունաբերական պալատ, Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն): Նշյալ կառույցներին

տրամադրվել է նաև տեղեկատվություն ս/թ Թեհրանում կազմակերպվող մի շարք ցուցահանդեսի անցկացման վերաբերյալ:

1-7

Հաշվետու ժամանակաշրջանում կողմերը նման միջոցառումների անցկացման նախաձեռնություն չեն ցուցաբերել:

5.9 Փոխայցելություններ դեռևս չեն իրականացվել:

5-10 Իրանական կողմին պարբերաբար հանձնվել է Հայաստանի զբոսաշրջային գրավչությունների վերաբերյալ գովազդային փաթեթներ:

Ազատ առևտրի ռեժիմի վերաբերյալ բանակցությունները ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը նպատակահարմար է համարում վարել «Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև ազատ առևտրի մասին» Համաձայնագրի հայկական կողմից ներկայացված նախագծի շրջանակներում:

<u>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն</u>

6-րդ նիստի Փոխըմբռնման հուշագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ քայլերը.

2006թ-ի նոյեմբերի 17-30-ը ՀՀ է ժամանել ԻԻՀ գյուղատնտեսության Ջիհադ նախարար Մոհամմադռեզա Էսքանդարիի գլխավորած պատվիրակությունը: Դրան նախորդել էր ՀՀ գյուղատնտեսության նախարարության պատվիրակության այցը Թեհրան՝ ստորագրվելիք փաստաթղթերի վերջնական համաձայնեցումների, այցին ծրագրերի նախապատրաստման նպատակով:

ԻԻՀ գյուղատնտեսության նախարարի այցի արդյունքում ստորագրվել են «ՀՀ կառավարության և ԻԻՀ կառավարության միջև կենդանիների առողջության և անասնաբուժության բնագավառում համագործակցության մասին» և «ՀՀ կառավարության և ԻԻՀ կառավարության միջև բույսերի պաշտպանության և բուսական կարանտինի բնագավառում համագործակցության մասին» Համաձայնագրերը:

Բացի այդ ստորագրվել է գյուղատնտեսության բնագավառում համագործակցության մասին Փոխըմբռնման հուշագիր, որով նախատեսվում է ակտիվացնել երկկողմ համագործակցությունը մասնավորապես երկրագործության, անասնաբուծության և ոռոգման բնագավառներում:

<u>ՀՀ բնապահպանության նախարարություն</u>

3-1. 2006թ. մայիսի 20-ից 21-ը Իրանի Իսլամական Հանրապետության մայրաքաղաք Թեհրանում կայացել է Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության ներկայացուցիչների հանդիպումը, որտեղ քննարկվել են Արաքս գետի ջրային ռեսուրսների աղտոտվածության խնդիրները:

Հանդիպման ժամանակ կայացած նիստում կողմերի կողմից քննարկվել է Մեղրի-Նորդուզ կամրջի վերին հատվածի հիդրոմետ կայանի կառուցման նախագիծը, որը ԻԻՀ-ի կողմից ԱԳՆ-ի միջոցով կտրամադրվի Հայաստանի Հանրապետությանը՝ ուսումնասիրելու և կարծիքը հայտնելու համար:

Պայմանավորվածության համաձայն, 2006թ. հունիսի 20-ից 21-ը տեղի ունեցած կողմերի III սահմանային հանդիպման և Թավրիզ այցելելու ժամանակ երկու կողմերի փորձագետները ստույգ որոշել են գետի որակի նմուշառման կայանների տեղանքը, սկզբից՝ ՀՀ կողմի Արաքս գետի ափամերձ տարածքում, հետո ԻԻՀ կողմի Արաքս գետի

ափամերձ տարածքում, ինչպես նաև ջրի անալիզի ենթակա աղտոտող նյութերի ցանկը և նմուշառման հաճախականությունը:

2006թ. օգոստոսի 14-16-ին Ծաղկաձորում տեղի ունեցավ ՀՀ և ԻԻՀ ներկայացուցիչների միջև Արաքս սահմանային գետի երկու երկրների համատեղ սահմանի աղտոտվածության ուսումնասիրության IV նիստը:

Համաձայն կողմերի երրորդ նիստի պայմանավորվածության /ՀՀ և ԻԻՀ ներկայացուցիչների միջև Արաքս գետի աղտոտվածության համատեղ ուսումնասիրության նիստ/ կողմերը 2006թ. օգոստոսի 15-ին այցելեցին ՀՀ բնապահպանության նախարարության շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոնի Երևանի լաբորատորիա:

Ի կատարումն կողմերի երրորդ նիստի պայմանավորվածության՝ կողմերը վերջնական համաձայնության եկան երրորդ նիստի արձանագրությունում առաջարկվող միաժամանակյա նմուշառման կետերի վերաբերյալ և համաձայնության եկան սկսել միաժամանակյա մոնիտորինգը 2006թ. օգոստոսի 23-ից, որն իրականացվում է համաձայն համատեղ հաստատված ժամանակացույցի:

Ի կատարումն կողմերի երրորդ նիստի պայմանավորվածության՝ կողմերը վերջնական համաձայնության եկան երրորդ նիստի արձանագրությունում առաջարկվող համատեղ նմուշառման կետերի վերաբերյալ և համաձայնության եկան սկսել համատեղ մոնիտորինգը 2006թ. նոյեմբերի 22-ից, որն իրականացվում է համաձայն համապատասխան ժամանակացույցի:

Համաձայն ձեռք բերված պայմանավորվածության կողմերը ջրի նմուշառումները և վերլուծությունները կատարում են իրենց կողմից կիրառելի և միջազգայնորեն ընդունված ջրի որակի մոնիտորինգի մեթոդաբանությամբ և ստանդարտներով:

3-3. Ռամսարի կոնվենցիայի շրջանակներում ԻԻՀ բնապահպանական կազմակերպության հրավերով 2007թ. 1-ին կիսամյակում Հայաստանում Ռամսարի Ռամսարի կոնվենցիայի համակարգողը, որպես դիտորդ երկրի ներկայացուցիչ մասնակցել է արևմտյան և կենտրոնական Ասիայի Ռամսարի տարածաշրջանային գիտական և ուսումնական կենտրոնի ռազմավարության ամփոփման և առաջին կոորդինացիոն ժողովին:

3-4 . ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ մշակվել է «Արևիկ» պետական արգելոց ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նշված արգելոցը նախատեսվում է ստեղծել հարավային Հայաստանում՝ Արաքս գետի ավազանի կենսաբազմազանության պահպանության և հետագա համագործակցության համար:

<u>ՀՀ առողջապահության նախարարություն</u>

6-րդ նիստի արդյունքում ստորագրված Փոխըմբռնման հուշագրումից հետո ակտիվացել է ՀՀ-ում և ԻԻՀ-ում անցկացվող գիտական և բժշկական միջոցառումների մասին տեղեկատվության փոխանակումը: 3.6 կետով նախատեսված դրույթները հստակեցնելու և իրականացնելու համար անհրաժեշտ է կազմակերպել փորձագետների երկկողմ հանդիպումներ: Ծրագրվում է ՀՀ առողջապահության նախարարի այցն ԻԻՀ:

Մշակույթի նախարարություն

6-րդ նիստի Փոխըմբռնման հուշագրի դրույթներով իրականացվել են.

5.5 - Հ. Թումանյանի անվան պետական տիկնիկային փատրոնը մասնակցել է Թեհրանի 11-րդ տիկնիկային թատրոնների միջազգային փառատոններին:
Նոր Ջուղայում հայերի հաստատման 400-ամյակին նվիրված համերգներով հանդես է եկել «Սանկտուս» վոկալ քառյակը

5.6 - «ՀՀ մշակույթի նախարարության և ԻԻՀ մշակութային ժառանգության և զբոսաշրջության կազմակերպության» միջև մշակութային ժառանգության բնագավառում 2006-2011թթ. համագործակցության ծրագիրը ստորագրվել է 2006թ-ի հուլիսին՝ ՀՀ նախագահի ԻԻՀ կատարա այցի ընթացքում

5.7 և 5.8 Նախապատրաստական աշխատանքներ են տարվում մշակութային արժեքների պահպանության և մշակութային ժառանգության ոլորտներում փորձի ուսումնասիրման նպատակով աշխատանքային խմբերի ստեղծման, մասնագետների փոխանակումների ուղղությամբ:

ՀՀ կրթության և գիտության նախարարություն

6-րդ նիստի արդյունքում ստորագրված Փոխըմբռնման հուշագրի 5-2 կետի համաձայն աշխատանքներ են կատարվել «ՀՀ կառավարության և ԻԻՀ կառավարության միջև գիտության և տեխնոլոգիաների բնագավառում 2006-2009թթ. համար համագործակցության մասին» գործնական ծրագրի շուրջ:

«Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Իրանի Իսլամական Հանրապետության կրթության և դաստիարակության նախարարության միջև կրթական համագործակցության մասին 2005-2008 թվականների համար» փոխըմբռնման հուշագրի շրջանակներում իրանական կողմին է ներկայացվել ՀՀ պետական և հավատարմագրված ոչ պետական բուհերի ցանկը և ԻԻՀ համապատասխան գերատեսչությունից պահանջվող արտասահմանյան համալսարանների որակավորման թերթիկները/ Ռուս- հայկական սլավոնական պետական համալսարան , Երևանի գեղարվեստի պետական Ակադեմիա, Հայաստանի պետական ագրարային համալսարանի, Ինտեռլինգվա լեզվագիտական համալսարանի՝ ակնկալելով նմանատիպ տեղեկություններ ստանալ իրանական կողմից:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Բավականին ակտիվացել է այս ոլորտում հայ- իրանական համագործակցությունը, որի հիմքը դրվել է դեռևս 2005թ. հունվար ամսին՝ Հայաստանի Հանրապետության պատվիրակության՝ Իրանի Իսլամական Հանրապետություն կատարած պաշտոնական այցի ժամանակ: Ներկա փուլում այս շրջանակներում աշխատանքներ են տարվում «Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև աշխատանքի և սոցիալական հարցերի բնագավառում համագործակցության մասին»

փաստաթղթի ստորագրման նախապատրաստման, ԻԻՀ աշխատանքի և սոցիալական հարցերի ապահովության նախարար պարոն Մոհհամադ Զահրոմիի՝ ՀՀ պատասխան այցի կազմակերպման /հրավերն ուղարկվել է, սակայն իրանական կողմից դեռ պատասխան չի ստացվել/, ինչպես նաև 2005թ. հունվարի 25-ին Թեհրանում ստորագրված «Փոխըմբռնման հուշագրի » դրույթների կատարման ուղղությամբ:

Հաշվի առնելով վերոնշյալ բնագավառում համագործակցության ակտիվացման միտումները՝ նախարարությունն առաջարկել է Հայ-իրանական կապերի կոորդինացման միջկառավարական հանձնաժողովի կազմում ներգրավել նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցչին:

ՀՀ արդարադատության նախարարություն

6-րդ նիստի արդյունքում ստորագրված Փոխըմբռնման հուշագրով իրանական կողմի հետ փոխհամաձայնեցվել են ՀՀ և ԻԻՀ միջև հանձնման մասին և քաղաքացիական և քրեական գործերով իրավական օգնության մասին համաձայնագրերը, որոնք ստորագրվել են ՀՀ նախագահի 2006թ-ի հուլիսի 5-ին ԻԻՀ կատարած աշխատանքային այցի ընթացքում:

Հիշյալ համաձայնագրերը ՀՀ կողմից արդեն վավերացվել են /ՀՀ ԱԺ 2006թ-ի դեկտեմբերի 20-ի որոշումներով/:

ՀՀ ոստիկանություն

6-րդ նիստի 6-4 կետով առաջարկվել է ստեղծել միջգերատեսչական աշխատանքային խումբ՝ Փոխըմբռնման հուշագրի նախագիծ մշակելու նպատակով:

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն

6-րդ նիստի Փոխըմբռնման հուշագրով ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանն առնչվող հարցեր առկա չեն

Միջմարզային Համագործակցություն

Սյունիքի Մարզ

6-րդ նիստի Փոխըմբռնման հուշագրի դրույթների կատարման ընթացքը.

6.1 ԻԻՀ Արևելյան Ատրպատականի նահանգ մեկնելու նպատակով ներկայացվել 05.04.06 թ-ին ներկայացվել էր ՀՀ Սյունիքի պատվիրակության կազմը: Իրանական կողմից պատրաստակամություն չցուցաբերելու պատճառով այցը չիրագործվեց:
ՀՀ Սյունիքի մարզպետի 04-671, 10.04.06թ. գրությամբ այցելության հրավեր է ուղարկվել ԻԻՀ Արևելյան Ատրպատականի նահանգապետ Մոհամմադ Սեմարզադեին: Հրավերը մնացել է անարձագանք:

6.2 - 2005թ-ի հունիսի 29-ին կայացել է սահմանային համատեղ հանձնաժողովի 1-ին նիստը, Կապան քաղաքում: 2-րդ նիստը հնարավոր կլինի անցկացնել փոխադարձ նոր համաձայնությամբ սահմանված ժամկետում:

6.3 - ՀՀ Սյունիքի մարզպետարանի կողմից ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն առաջարկություններ էին ներկայացվել սահմանամերձ առևտրի շուկայի գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Մասնավորապես առաջարկվել էր վերանայել սահմանամերձ շուկայի հայկական կողմի մասնակիցների կողմից ներմուծվող ապրանքների ծավալի և գնի գործող չափաքանակները, որոնց համար նախատեսված է արտոնություն:

6.5 Հուշագրի կնքումից հետո ՀՀ Սյունիքի և ԻԻՀ Արևելյան Ատրպատականի նահանգի պատվիրակությունների հանդիպում չի կայացել: Համապատասխան համաձայնագրերը / Մեղրի և Ջուլֆա, Կապան և Մարանդ քաղաքների միջև «քույր քաղաքներ» ճանաչելու վերաբերյալ համաձայնագրեր/ հնարավոր կլինի նախապատրաստել կամ կնքել առաջիկա հանդիպումների ընթացքում:

Արարատի Մարզ

2006թ-ին նախատեսվում էր ՀՀ Արարատի մարզպետի գլխավորած պատվիրակության այցը ԻԻՀ Հորմոզգանի նահանգ: Այցը չկայացավ ֆինանսական պատճառներով

Առևտրաարդյունաբերական պալատ

6-րդ նիստի Փոխըմբռնման հուշագրի 1-6, 1-8 կետերով իրականացվել են հետևյալ միջոցառումները.

1. 2006թ-ի մարտի 1-ին ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի և ԻԻՀ Մազանդարանի նահանգի առևտրաարդյունաբերական և հանքերի պալատի միջև կնքվեց առևտրային համագործակցության, ցուցահանդեսների և համաժողովների կազմակերպման և փոխադարձ տեղեկատվության փոխանակման ոլորտներն ընդգրկող փոխգործակցության հուշագիր
2. 2006թ-ի մայիսի 11-15-ը ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի նախագահ Մ. Սարգսյանի գլխավորած պատվիրակությունը մասնակցեց ԻԻՀ Մազանդարանի նահանգի Սարի քաղաքում ՀՀ արդյունաբերական հզորությունները ներկայացնող առաջին մասնագիտական ցուցահանդեսին և գործարար համաժողովին: ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի և ԻԻՀ Մազանդարանի նահանգի առևտրաարդյունաբերական և հանքերի պալատի միջև կնքվեց կնքվեց փոխըմբռնման հուշագիր
3. 6-րդ նիստի Փոխըմբռնման հուշագրի 1-8 կետով իրանական կողմին են ներկայացվել հետևյալ թեկնածությունները՝ Արգամ Լևոնի Նազարյան, Նիկոլայ Ստեփանի Հակոբյան / նկատի ունենալով, որ Փոխըմբռնման հուշագրի որոշ կետեր առնչվում են ՀՀ ԱԱՊ-ի գործառույթներին, ՀՀ ԱԱՊ-ն առաջարկում է օրենքով սահմանված կորգով հայ-իրանական կապերի կոորդինացման միջկառավարական հանձնաժողովում ընդգրկել պալատի գործադիր տնօրեն Գ.Վարդանյանին/:

ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտե

Արդեն վավերացվել է 2004թ. սեպտեմբերի 8-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի և Իրանի Իսլամական Հանրապետության մաքսային ծառայության միջև մաքսային գործերում փոխադարձ վարչական օգնության վերաբերյալ» Փոխըմբռնման հուշագիրը, որն ուժի մեջ է մտել :

6-րդ նիստի արդյունքում ստորագրված Փոխըմբռնման հուշագրով ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեին կոնկրետ հանձնարարականներ չեն տրվել:

Երևանի քաղաքապետարան

6-րդ նիստի Փոխըմբռնման հուշագրով Երևանի քաղաքապետարանին առնչվող կետ չի ներառվել:

ՀՀ Կենտրոնական բանկ

6-րդ նիստի արդյունքում ստորագրված Փոխըմբռնման հուշագրի դրույթներով իրականացվել են.

1.10 ՀՀ կենտրոնական բանկը հայտնել է և հայտնում է իր պատրաստակամությունը հայկական բանկերի՝ իրանական բանկերին ունեցած պարտքերի մարման գործընթացի վերաբերյալ շարունակաբար անհրաժեշտ տեղեկատվության փոխանցելու գործում՝ իրանական կողմին նման պահանջը գրավոր ստանալու դեպքում:

1.11 26.06.06-ից 29.06.06թթ-ն ընկած ժամանակահատվածում Թեհրանում տեղի է ունեցել ԻԻՀ և ՀՀ միջկառավարական աշխատանքային խմբերի հանդիպում, որի ժամանակ ի թիվս այլ հարցերի քննարկվել են նաև բանկային վերահսկողության ոլորտում հնարավոր համագործակցության ձևերը, սակայն իրանական կողմը նշել է, որ չի տեսնում նշված ոլորտում համագործակցությանը պաշտոնական տեսք տալու և համաձայնագիր կնքելու անհրաժեշտությունը հետևյալ պատճառներով.

- ԻԻՀ օրենսդրությամբ արգելված է օտարերկրյա բանկի գործունեության իրականացումն Իրանում, այդ իսկ պատճառով համաձայնագրի այն հիմնական դրույթները, որոնք առնչվում են Իրանի տարածքում գործող ՀՀ դուստր բանկերի և մասնաճյուղերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրելուն՝ չեն կարող գործել:
- Իրանական դուստր բանկերի և մասնաճյուղերի վերաբերյալ ՀՀ ԿԲ-ի կողմից տեղեկատվություն տրամադրելու առնչությամբ իրանական կողմը նշել է, որ «համաձայն ԻԻՀ օրենսդրության՝ նշված բանկերը և մասնաճյուղերը ամբողջությամբ գտնվում են ընդունող երկրի վերահսկողության ներքո, այդ իսկ պատճառով, իրանական կողմը սովորաբար ձեռնպահ է մնում վերոհիշյալ մարմիններից տեղեկատվություն ստանալուց»: Նշվել է նաև, որ Իրանի կենտրոնական բանկը որևէ երկրի հետ բանկային վերահսկողության ոլորտում համագործակցության նմանատիպ պայմանագիր չունի, իսկ եթե տեղեկատվության փոխանակման կարիք է առաջանում, ապա դա ընդունված է իրականացնել առանց համաձայնագրի:

Այդուհանդերձ, քննարկումների ընթացքում բանավոր պայմանավորվածություն է ձեռք բերվել առ այն, որ համագործակցության և տեղեկատվության փոխանակման անհրաժեշտության դեպքում՝ երկու երկրների կենտրոնական բանկերը կարող են այդ մասին գրավոր տեղեկացնել միմյանց և օրենքների շրջանակներում գրավոր պատասխաններ ստանալ:

ՀՀ ԱԳՆ-ն 16/16052, 25.12.06թ-ի գրությամբ ՀՀ ԿԲ է ներկայացրել ԻԻՀ ԿԲ-ի կողմից մշակված «ԻԻՀ կենտրոնական բանկի և ՀՀ կենտրոնական բանկի միջև միջբանկային փոխըմբռնման հուշագրի» նախագիծը: Նախագծի ուսումնասիրության արդյուքները թույլ են տվել եզրահանգելու, որ այն ըստ էության ամբողջականորեն չի կարգավորում երկու պետությունների ԿԲ-երի միջև միջգերատեսչական համագործակցության, փոխօգնության և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարաբերությունները: Նշված Հուշագրի նախագծի կապակցությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից առաջարկություններ և դիտողություններ չեն ներկայացվել:

ՁԼՄ բնագավառ

6-րդ նիստի արդյունքում ստորագրված Փոխըմբռնման հուշագրի իրականացման նպատակով 2007թ-ի ապրիլի 19-ին ԻԻՀ հեռուստառադիոընկերության նախագահ Էզաթոլլահ Զարղամին ժամանեց Հայաստան: Այցի արդյունքում ստորագրվեց լրատվամիջոցների համագործակցության Գործնական ծրագիր:

v Հայաստանի Հանրապետության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության միջկառավարական հանձնաժողով

2007թ. առաջին կիսամյակում հայ-եգիպտական միջկառավարական հանձնաժողովի աշխատանքների համար որպես ուղեցույց են հանդիսացել Հայ-եգիպտական տնտեսական, գիտական և տեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 4-րդ համատեղ նիստի /2005թ. դեկտեմբերի 5-6-ը/ արձանագրության դրույթները:

Նախատեսվում է ս.թ. հոկտեմբեր-նոյեմբերին Երևանում գումարել հայ-եգիպտական միջկառավարական հաձնաժողովի 5-րդ նիստը, որի հայկական կողմի կազմը ձևավորելու, ինչպես նաև ՀԵՄՀ համատեղ նիստի օրակարգում առաջարկություններ ներկայացնելու համար հանձնարարականներ են ուղարկվել համապատասխան գերատեսչություններ:

Կատարվել և նախատեսվում են հետևյալ աշխատանքներն ըստ ոլորտների.

Կապի և հեռահաղորդակցության ոլորտ

«Հայաստանի հեռուստատեսային ցանց» ՓԲ ընկերության Երևանի վերգետնյա արբանյակային ընդունիչ-հաղորդիչ կայանի միջոցով Եգիպտոսի Արաբական Հանրապետությունում հեռարձակվում են Հայաստանի ազգային հեռուստատեսության և ռադիոյի ծրագրերը:

Գյուղատնտեսություն

Այս բնագավառում նախատեսվում է համատեղ աշխատանք տանել երկու երկրների գյուղատնտեսության նախարարների միջև նախկինում ստորագրված համաձայնագրի և փոխըմբռնման հուշագրի դրույթների իրագործման ուղղությամբ:

Ձեռնարկել միջոցներ ՀՀ անասնաբուժական պատվաստուկների արտադրության հայ-եգիպտական համատեղ կազմակերպություն ստեղծելու ուղղությամբ:

Համագործակցության շրջանակներում ակտիվացնել աշխատանքները տարածաշրջանային միջազգային կազմակերպությունների, մասնավորապես ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO), Չորային գոտիներում գյուղատնտեսական հետազոտությունների միջազգային կենտրոնի (ICARDA), Սևծովյան տնտեսական համագործակցության հետ:

Մշակույթի ոլորտ

Հուլիսի 21-ինկմեկնարկի «Եգիպտոսի մշակույթի օրերը Հայաստանում ծրագիրը», որի ընթացքում կանցկացվի նաև «Եգպտոսի մշակույթի և գրականության օրեր» միջոցառումը:

Ապրիլին՝ ՀՀ նախագահի Եգիպտոս այցի ընթացքում, Կահիրեում և Ալեքսանդրիայում «Գայանե» բալետի ներկայացմամբ կազմակերպվել են Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի հյուրախաղերը:

Առևտրաարդյունաբերական

Նախատեսվում է ՀՀ կառավարության և ԵԱՀ կառավարության միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության մասին համաձայնագրի ստորագրում:

ՀՀ-ում գործող առևտրատնտեսական ոլորտի ենթակառուցվածքների՝ Զարգացման Հայկական Գործակալություն, ՀՀ առևտրաարդյունաբերական պալատ, Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն և եգիպտական նմանատիպ կառույցների միջև համագործակցության ընդլայնում:

Կրթություն

ԵԱՀ բարձրագույն կրթության նախարարության հետ ճշտվել են ՀՀ քաղաքացիների կրթաթոշակների տրամադրման հետ կապված հարցերը: Եգիպտական կողմը տրամադրել է բարձրագույն կրթություն ստանալու 2 և արաբերեն լեզվի վերապատրաստման 5 կրթաթոշակներ: Միևնույն ժամանակ հայկական կողմը եգիպտականին տրամադրել է 3 բարձրագույն և 2 հետդիպլոմային ուսուցման կրթաթոշակ:

Գործնական կապեր են հաստատվել եգիպտական Այն Շամս համալսարանի հետ: ՈՒսումնասիրվում են վերջինիս հետ ՀՀ բուհերի հմագործակցության կոնկրետ ծրագրերը:

Էներգետիկա

Եգիպտոսի էներգետիկայի նախարարությունը երկկողմ համագործակցությունը խթանելու նպատակով, առաջարկել է իրականացնել այդ բնագավառի մասնագետների փոխայցելություններ և փորձի փոխանակում, խրախուսելու երկու երկրներում էներգետիկ ապրանքներ արտադրող ընկերությունների մասնակցությունը արտադրական ցուցահանդեսներին:

Հատկապես նշանակալի է, որ ս.թ. ապրիլի 14-16-ը տեղի է ունեցել ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի այցը ԵԱՀ, որի շրջանակներում եգիպտական կողմի հետ ստորագրվել են հետևյալ փաստաթղթերը.

1. Պայմանագիր ՀՀ և ԵԱՀ միջև քրեական հարցերում իրավական փոխօգնության մասին
2. Պայմանագիր ՀՀ և ԵԱՀ միջև էքստրադիցիայի մասին
3. Պայմանագիր ՀՀ և ԵԱՀ միջև հանցավորության դեմ պայքարի բնագավառում համագործակցության մասին
4. Պայմանագիր ՀՀ և ԵԱՀ միջև մաքսային բնագավառում համագործակցության և փոխօգնության մասին
5. Գործնական ծրագիր ՀՀ առեվտրի և տնտեսական զարգացման նախարարության և ԵԱՀ զբոսաշրջության նախարարության միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության մասին
6. Պայմանագիր Երևանի Բժշկական համալսարանի և Կահիրեի համալսարանի միջև համագործակցության մասին
7. Պայմանագիր հայ-եգիպտացի գործարարների համատեղ գործարար խորհուրդ ստեղծելու մասին
8. Պայմանագիր ԵԱՀ Միջինարևելյան լրատվական գործակալության և ՀՀ Արմենպրեսի միջև

ՀՀ Նախագահի Եգիպտոս կատարած այցի շրջանակներում տեղի ունեցավ նաև ՀՀ և ԵԱՀ գործարարների համաժողով, որի ընթացքում քննարկվեցին երկկողմ համագործակցության հնարավորությունները և ձեռք բերվեցին կոնկրետ պայմանավորվածություններ:

v Առևտրի, տնտեսության, տեխնոլոգիայի, գիտության, կրթության և մշակույթի բնագավառներում համագործակցության <u>հայ-հնդկական</u> միջկառավարական հանձնաժողով

2007թ. հունվարի 19-ին Հնդկաստանի Նյու Դելի քաղաքում տեղի ունեցավ Առևտրի, տնտեսության տեխնոլոգիայի, գիտության, կրթության և մշակույթի բնագավառներում համագործակցության Հայ-հնդկական միջկառավարական հանձնաժողովի 4-րդ նիստը, որի ընթացքում ձեռք բերված որոշ պայմանավորվածությունների իրագործումը արդեն իսկ սկսված են:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ

Համաձայն ձեռք բերված պայմանավորվածության՝ ս.թ. օգոստոսի 5-ին » հնդկական ընկերության տեխնիկական մասնագետների, որոնց նպատակն է ուսումնասիրել Հայաստանում տեղեկատվական կենտրոնի հիմնադրման պայմանները, ինչպես նաև հանդիպումներ

նը հանդիսանում է Հնդկաստանի կառավարության կողմից լիազորված կազմակերպություն: ՀՀ կառավարության հանձնարարությամբ հայկական

կողմից ծրագիրն իրականացնելու է «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամը: Հնդիկ մասնագետների կողմից տրված եզրակացության հիման վրա կմշակվի գործողությունների ծրագիր և ժամանակացույց:

Առողջապահության ոլորտ

Միջկառավարական հանձնաժողովի նիստի ընթացքում քննարկվել է հնդկական կողմին ներկայացված առողջապահության ոլորտում համագործակցության համաձայնագրի ստորագրման հարցը: Համաձայն հնդկական կողմի հետ ձեռք բերված պայմանավորվածության՝ մինչ համաձայնագրի ստորագրումը 2007թ. ընթացքում արդեն իսկ նախատեսվում են մասնագետների պատվիրակությունների փոխանակումներ՝ փորձի փոխանակման նպատակով: Պատվիրակությունների տեղական ծախսերը հոգալու են ընդունող կողմերը:

Գյուղատնտեսության ոլորտ

2007թ. հուլիսին ՀՀ գյուղատնտեսության նախարարության հրավերով Հայաստանում էր գտնվում Հնդկաստանի գյուղատնտեսության պետնախարար Կ.Լ. Բհուրիան: Հետամուտ լինելով միջկառավարական հանձնաժողովի նիստում համագործակցության սերտացման վերաբերյալ ձեռք բերված պայմանավորվածությունների, կողմերը որոշեցին ուսումնասիրել Հնկաստանում հայկական ծիրանի այգի հիմնելու հնարավորությունը: Ներկայումս երկու նախարարությունների մասնագետները տանում են համապատասխան աշխատանքներ այդ ուղղությամբ: Նախատեսվում է Հնդկաստան ուղարկել 100 հազար ծիրանենու տնկիներ:

Սեյսմիկ պաշտպանության ոլորտ

Միջկառավարական նիստի ընթացքում ձեռք է բերվել պայմանավորվածություն երկու երկրների սեյսմիկ ծառայությունների համագործակցությունը խորացնելու վերաբերյալ: Ընթանում են բանակցություններ Հայաստանի սեյսմիկ ծառայության մասնագետների այցը Հնդկաստան կազմակերպելու վերաբերյալ: Այս բնագավառում արդեն կա համագործակցության փորձ: 2001թ. Հնդկաստանի Գուջարաթ նահանգում ավերիչ երկրաշարժից հետո Հնդկաստան է մեկնել հայ սեյսմոլոգների և փրկարարների խումբ:

Մշակութային ոլորտ

Հայ-հնդկական դիվանագիտական կապերի հաստատման 15-ամյակի կապակցությամբ 2007-2008թթ. նախատեսվում է Երևանում, Նյու Դելիում, Մումբայում, Կոլկաթայում անցկացնել հայ-հնդկական բարեկամությանը նվիրված մշակութային միջոցառումներ: Երևանում մշակութային միջոցառումներն իրականացվելու են Հայաստանում Հնդկաստանի դեսպանության և ԱԳՆ աջակցությամբ: 2007թ. նոյեմբեր - դեկտեմբեր ամիսների ընթացքում Հնդկաստանում ՀՀ դեսպանության և Կոլկաթայի եկեղեցական խորհրդի նախաձեռնությամբ Կոլակաթայում կանցկացվի Հայկական շաբաթ, որի ընթացքում նախատեսվում է կազմակերպել գիտնականների մասնակցությամբ կլոր սեղան, հայկական ապրանքների և նկարների ցուցահանդես,

«Շողակն» համույթի համերգ: Մումբայում նույնպես անցկացվելու է հայկական շաբաթ՝ ՀՀ դեսպանության, Մումբայում ՀՀ պատվավոր հյուպատոս Հ. Մեհտայի և Հնդկաստանի Մշակութային հարաբերությունների խորհրդի աջակցությամբ:

Մումբայում Հայաստանի պատվավոր հյուպատոս Հ. Մեհտայի աջակցությամբ Հայաստանում նախատեսվում է հդկական կինոնկարի նկարահանում, ինչպես նաև ոսկերչության ինստիտուտի հիմնադրում:

Կրթության ոլորտ

Համաձայն միջկառավարական հանձնաժողովի նիստի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների՝ Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում ստեղծել հինդի լեզվի ուսուցման կենտրոն:

Շարունակվում են հայ մասնագետների ուսուցողական դասընթացները, որոնք ամբողջովին հովանավորվում են Հնդկաստանի կառավարության կողմից /ITEC/: 2007թ. նախատեսվում է Հնդկաստան ուղարկել մոտ 60 տարբեր գերատեսչությունների մասնագետներ՝ դասընթացներին մասնակցելու նպատակով:

v Առևտրի, արդյունաբերության, էներգետիկայի, գիտության, տեխնոլոգիաների, գյուղատնտեսության, կրթության և մշակույթի բնագավառներում հայ-չինական միջկառավարական հանձնաժողով

2007թ. ապրիլի 20-21-ին Երևանում կայացավ Հայ-չինական միջկառավարական հանձնաժողովի 5-րդ նիստը: Նիստի ընթացքում քննարկվեցին երկկողմ տնտեսական համագործակցության խնդիրները և տնտեսության բնագավառում համատեղ ծրագրերի իրականացման ընթացքը:

Առևտուր

Նշվեց, որ անցած տարվա ընթացքում արձանագրվեց երկկողմ առևտրային շրջանառության ավելի, քան 40% աճ, ինչը կազմել է մոտ 52 մլն. ԱՄՆ դոլար: Հատկանշական է, որ Հայաստան ներկրվող չինական արտադրության ապրանքների ծավալն անցել է 100 մլն. ԱՄՆ դոլարի սահմանը: Առևտրաշրջանառության ներկայիս ծավալները թեև բվարար չեն, սակայն այն վկայում է, որ առկա են աճի կայուն միտումներ: Մտքեր փոխանակվեցին առևտրի ոլորտում երկու երկրների ձեռնքրկատիրական շրջանների համագործակցությանը աջակցելու վերաբերյալ: Չինական կողմից ընդգծվեց, որ Չինաստանը շահագրգռված է Հայաստանի հետ առևտրաշրջանառության ծավալների մեծացման մեջ:

Արդյունաբերություն

Չինական կողմը հայտարարեց, որ 2007թ. վերջին Չինաստանում տեղի կունենա «Շանսի-Նաիրիտ» ՀՁ-ի շահագործման հանձնումը:

Չինական կողմի առջև բարձրացվեց Չինաստանում ներկայումս ընթացող ՀՁ ստեղծման տեմպերի արագացման և միաժամանակ զուգահեռ Երևանում հայ-չինական ՀՁ-ի գիտահետազոտական, փորձարարական համատեղ ձեռնարկություն ստեղծման հարցերը, որի նպատակով «Նաիրիտ-2» ՓԲԸ-ն կներդներ իր տարածքը, շինությունները,

սարքավորումները, իսկ չինական կողմը դրամական միջոցներ և սարքավորումներ: Միևնույն ժամանակ հայկական կողմն առաջարկում է Հայաստանում համատեղ հիմնադրել կաուստիկ սոդայի և աղաթթվի համատեղ արտադրություն՝ չինական կողմից կապիտալ ներդումներ օգնությամբ (մոտ 50 մլն. ԱՄՆ դոլար):

Տեխնիկական օգնության ծրագրեր

Չինական կողմից տեղեկացվեց նաև, որ ՉԺՀ կառավարության կողմից Հայաստանին հատկացված 15 մլն յուանի անհատույց օգնության շրջանակներում որոշվել է Հայաստան առաքել գյուղատնտեսական տեխնիկա և գյուղմթերքի վերամշակման սարքավորումներ, ինչպես նաև անցկացնել ՉԺՀ-ում հայ մասնագետների վերապատրաստման դասընթացներ: Միաժամանակ, մերժվեց վերոհիշյալ գումարից Պեկինում ՀՀ դեսպանատան շենքի վերանորոգման և տեխնիկական վերազինման աշխատանքների համար որոշակի չափաբաժնի հատկացումը, այն պատճառաբանմամբ, որ ՉԺՀ առևտրի նախարարության կողմից անհատույց օգնության հատկացումները նման հոդվածներ չեն նախատեսում:

Գյուղատնտեսության ոլորտ

Հանձնաժողովի նիստի ընթացքում երկկողմ պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել համագործակցությունը գյուղատնտեսության տարբեր ճյուղերում, մասնավորապես՝ խաղողագործության (Չինաստանի Շանսի նահանգի պատվիրակությունը հետաքրքրություն է ցուցաբերել հայկական խաղողի ցրտադիմացկուն տեխնիկական սորտերինկատմամբ և առաջարկել լրացուցիչ պայմանավորվածություններ ձեռք բերելուց հետո այդ խաղողի որոշ սորտերի փորձարկումներ կատարել Շանսի նահանգում), պտղաբուծության (Շանսի նահանգի պոմոլոգիական ինստիտուտը աջողությամբ իրականացնում է հայկական ծիրանի աճեցման փորձառկումները): Բացի այդ, «Խաղողապտղագինեգործության Գիտական Կենտրոն» ՊՓԲԸ-ում ՉԺՀ Շանսի նահանգի Գյուղատնտեսական Գիտությունների Ակադեմիայի պտղաբուծության և խաղողագիտության գիտա-հետազոտական ինստիտուտի պատվիրակության հետ կայացած հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել գիտական համագործակցություն ծավալել երկու գիտական կենտրոնների միջև, մասնավորապես խաղողի սորտերի ցանկերի փոխանակման, ինչպես նաև դրանց լավագույն սորտերի փորձարկման ուղղությամբ: Նույն կարգի աշխատանքներ են տարվել նաև ծիրանի և այլ պտղատեսակների գծով: ՀՀ գյուղնախարարության կողմից առաջարկվեց չինական կողմի հետ համագործակցություն ծավալել գյուղարտադրանքի վերամշակման տեխնոլոգիական սարքավորումների, փոքր հզորության ալրաղացների մատակարարումների ոլորտում, ինչպես նաև քննարկել հայկական տեխնոլոգիաներով և մասնակցությամբ Չինաստանում գինեգործական համատեղ ձեռնարկություն ստեղծելու հարցը: Բացի այդ, նպատակահարմար է համարվում, շարունակել աշխատանքները գիտության բնագավառում՝ համագործակցելու և հայաստանյան մասնագետների ՉԺՀ-ում վերապատրաստվելու ուղղությամբ:

Տրանսպորտ և հեռահաղորդակցություն

Հայկական կողմը տեղեկացրել է, որ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը պատրաստվում է կազմակերպել «Հայկական երկաթուղի» փակ բաժնետիրական

ընկերության կոնցեսիոն կառավարմանը հանձնելու մրցույթ: Մրցույթին մասնակցելու պայմանները, ինչպես նաև անցկացման ժամկետը հայտնի կլինեն 2007թ. հուլիս-օգոստոս ամիսներին: Չինական կողմին առաջարկվեց մասնակցություն ցուցաբերել նշված մրցույթին: Բացի այդ, հաշվի առնելով տարածաշրջանում Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքը՝ երկրի համար կարևոր նշանակություն է ձեռք բերում Հայաստանը Իրանի հետ միացնող երկաթուղու կառուցումը: Չինական կողմին նաև առաջարկվեց մասնակցություն ցուցաբերել նշված նախագծի տեխնիկա-տնտեսական հիմնավորման մշակմանը, ինչպես նաև հետագա շինարարական աշխատանքներին: Նշվեց, որ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը 2006թ-ից համագործակցում է տեղեկատվական տեխնոլոգիաների և սարքավորումների արտադրության ոլորտում ներգրավված չինական «ZTE» ընկերության հետ: Հայկական կողմը նշված ոլորտում Չինաստանի հետ համագործակցության զարգացման իր շահագրգռվածությունն է հայտնել:

<u>Չինական կողմից հետաքրքրություն արտահայտվեց մասնակցելու Հայաստանի երկաթգծի մասնավորեցման ծրագրերին:</u>

Մաքսային ոլորտում համագործակցություն

Հայական կողմն առաջարկեց ավարտի հասցնել «ՀՀ և ՉԺՀ կառավարությունների միջև մաքսային գործերում համագործակցության և փոխօգնության մասին» համաձայնագրի բանակցությունները և ստորագրել համաձայնագիրը: Հայկական կողմը շահագրգռվածություն ցուցաբերեց Չինաստանի կողմից մաքսակետերի համար նախատեսվող տեխնիկական սարքավորումների ձեռքբերման մեջ, որոնք չինական կողմը պատրաստակամ է մոտ ապագայում տրամադրել:

Էներգետիկա

Հաշվի առնելով Չինաստանի նախկինում ցուցաբերած հետաքրքրությունը Հայաստանի էներգետիկ համակարգի ներդրումային նախագծերի հանդեպ՝ առաջարկվեց դիտարկել չինական կողմի մասնակցությունը ՀՀ տարածքում էլեկտրաէներգիա արտադրող կայանների, այդ թվում հիդրոէլեկտրակայանների կառուցման ներդրումային նախագծերում: Այդպիսի նախագծերի թվին են դասվում Իրան-Հայաստան գազամուղը, Մեղրիի ՀԷԿ-ի, ինչպես նաև փոքր և միջին ՀԷԿ-երի կառուցումը և այլն: Նշվեց, որ չինական մասնագետները հաջողությամբ են ավարտվել Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ

ընկերության: Ուշադրություն դարձվեց, որ չինական ընկերությունների ներկայացուցիչների և բարձրաստիճան պաշտոնյաների այցերի ընթացքում ստացվել են

CNTIC և այլ չինական կազմակերպությունների կողմից որոնք սակայն հաջողությամբ չեն պսակվել:

Գազարդյունաբերություն

«ՀայՌուսգազարդ» ընկերության կողմից ներկայացվեց գազային ենթակառուցվածքների զրագացման բնագավառում երկկողմ համագործակցության

հեռանկարները: Մասնավորապես, հնարավորություններ կան չինական արտադրության գազային կաթսաների մատակարարման համար:

Կրթություն

Կողմերը քննարկեցին Հայաստանում Կոֆուցիուսի ինստիտուտի հիմնման նախկինում ձեռք բերված պայմանավորվածության իրականացման ընթացքը: Պայմանավորվածություն ձեռք բերվեց կնքելու համապատասխան համաձայնագիր:

Մշակույթ

Պայմանավորվածություն ձեռք բերվեց այս տարի երկու երկրներում մշակութային օրերի անկացման և մշակութային խմբերի փոխանակման վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ՝ բնութագրելով նիստի աշխատանքները, անհրաժեշտ է նշել, որ այն կարևորվեց երկկողմ տնտեսական համագործակցության հետագա անելիքների ճշգրտման, դիրքորոշումների հստակեցման տեսանկյունից: Ամբողջացվեցին տնտեսական համագործակցության ոլորտում առկա ծրագրերը և նախաձեռնությունները և բացահայտվեցին համատեղ նախագծերի իրականացման նոր ուղղություններ:

- **Ֆինանսական և տեխնիկական համագործակցության <u>հայ-գերմանական</u> միջկառավարական հանձնաժողով**

Հայ-գերմանական միջկառավարական բանակցությունները նախատեսվում են անցկացնել 2007թ. սեպտեմբերի 11-12-ին Երևանում:

- **<u>Հայ-ավստրիական</u> միջկառավարական հանձնաժողով**

2007թ. մարտի 5-ից 9-ը Վիեննայում տեղի ունեցավ 1994 թ. ապրիլի 26-ի «Հայաստանի Հանրապետության և Ավստրիայի Հանրապետության միջև երկկողմ արտաքին տնտեսական հարաբերությունների մասին» համաձայնագրի 13-րդ հոդվածի համաձայն ստեղծված Հայ-ավստրիական առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցության միջկառավարական խառը հանձնաժողովի երրորդ նիստը:

Հայկական պատվիրակության ղեկավարն էր ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման փոխնախարար Տիգրան Դավթյանը, ավստրիական պատվիրակության ղեկավարն էր Ավստրիայի Տնտեսության և աշխատանքի նախարարության արտաքին տնտեսական հարաբերությունների հարցերով գլխավոր տնօրեն Յոհանն Զաքսը:

Հայաստանյան կառավարական պատվիրակությունը բաղկացած էր տասը անդամներից, որոնց թվում էին ՀՀ ԱԳ փոխնախարար **Ա.Բայբուրդյանը**, ՀՀ կրթության և գիտության փոխնախարար **Ա.Ավետիսյանը,** ՀՀ գյուղատնտեսության փոխնախարար **Ս.Գալստյանը,** ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության փոխնախարար **Թ.Գևորգյանը,** ովքեր առանձին աշխատանքային հանդիպումներ ունեցան Ավստրիայի Եվրոպական և միջազգային գործերի, գիտության և հետազոտությունների,

գյուղատնտեսության, անտառտնտեսության, բնապահպանության և ջրային պաշարների, սոցիալական և սպառողների շահերի պաշտպանության նախարարություններում:

Նշված աշխատանքային զրույցների, ինչպես նաև լիագումար նիստի ընթացքում հատուկ նշվեցին Հայաստանի և Ավստրիայի միջև քաղաքական, տնտեսական, գիտական և մշակութային ավանդաբար լավ հարաբերությունները: Այդ հարաբերությունների խնամքի և խորացման համար համաձայնություն ձեռք բերվեց կանոնավոր կերպով տեղեկատվության, մտքերի և այցելությունների փոխանակման մասին :

Հայ-ավստրիական առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցության միջկառավարական խառը հանձնաժողովի 3-րդ համատեղ նիստին քննարկվեցին հետևյալ թեմաները և համագործակցության բնագավառները.

- տնտեսական իրավիճակը Հայաստանում և Ավստրիայում,
- երկկողմ ապրանքաշրջանառությունը և ներդրումները,
- փոքր և միջին ձեռնարկություն,
- զբոսաշրջություն,
- շրջակա միջավայր,
- գյուղատնտեսություն և անտառային տնտեսություն,
- Էներգետիկ ոլորտ,
- մաքսային բնագավառ,
- հետազոտություն, տեխնոլոգիա և նորարարություն
- տրանսպորտ,
- սոցիալական և աշխատանքի հարցեր,
- առողջապահություն:

Քննարկման առարկա դարձավ նաև համագործակցությունը սպորտի, մշակույթի և երիտասարդության հարցերի, քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակի ծառայության, ինչպես նաև գիտության ոլորտներում:

Կողմերն անդրադարձան Ավստրիայի տնտեսության և աշխատանքի դաշնային նախարարության կողմից տնտեսական կառավարման ոլորտի հայ փորձագետների համար կազմակերպվող վերապատրաստման սեմինարների խնդրին:

Խառը հանձնաժողովի նիստի հաջորդ օրը՝ մարտի 8-ին, Ավստրիայի առևտրաարդյունաբերական պալատում անցկացվեց հայ-ավստրիական գործարար համաժողով, որին մասնակցում էին Զարգացման հայկական գործակալությունը, ինչպես նաև տարբեր ոլորտների շուրջ 30 հայկական ընկերությունների ղեկավարներ: Ավստրիական կողմից մասնակցում էին մոտ 50 ընկերությունների ղեկավարներ և ներկայացուցիչներ: Համաժողովի ընթացքում ներկայացվեցին ՀՀ տնտեսական զարգացման միտումներն ու փոխշահավետ համագործակցության համար առավել հետաքրքրություն ներկայացնող ոլորտները: Այնուհետև անցկացվեցինոլորտային քննարկումներ, որոնց ընթացքում քննարկվեցին մի շարք ծրագրեր, ձեռք բերվեցին համագործակցության կոնկրետ պայմանավորվածություններ տեղեկատվական տեխնոլոգիաների, զբոսաշրջության, բանկային և այլ ոլորտներում:

Երկկողմ արտաքին տնտեսական հարաբերությունների արդյունավետ ծավալման, ինչպես նաև այս նիստի արդյունքների քննարկման և խառը հանձնաժողովի հաջորդ

նիստի նախապատրաստման նպատակով համաձայնություն ձեռք բերվեց հանձնաժողովի համանախագահների միջանկյալ աշխատանքային հանդիպման վերաբերյալ:

Հայ-ավստրիական առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցության խառը հանձնաժողովի երրորդ նիստի շրջանակներում աշխատանքային քննարկումներն ընթացան մարտի 6-ին և 7-ին, իսկ մարտի 8-ի երեկոյան տեղի ունեցավ նիստի աշխատանքներն ամփոփող արձանագրության տեքստի պաշտոնական ստորագրումը երկու համանախագահների կողմից:

Կողմերը պայմանավորվեցին խառը հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել 2008թ. Հայաստանում: Նիստի ժամկետն ու օրակարգը կհամաձայնեցվեն դիվանագիտական ուղիներով:

- **<u>Հայաստանի Հանրապետության և Լեհաստանի հանրապետության</u> միջև համագործակցության միջկառավարական հանձնաժողով**

Հանձնաժողովի ստեղծման օրվանից մինչ օրս չի կայացել համատեղ նիստ:

- **<u>Հայ-ռումինական</u> միջկառավարական հանձնաժողով**

Հաշվետու ժամանակահատվածում հայ-ռումինական միջկառավարական հանձնաժողովի նիստեր չեն գումարվել:

Հարկ է նշել, որ վերոնշյալ միջկառավարական հանձնաժողովի աշխատանքները կարգավորող համաձայնագրի գործողության ժամկետը սպառվել է, Ռումինիայի՝ 2007թ. հունվարի 1-ից Եվրամիության անդամ դառնալուց հետո:

- **<u>Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության</u> միջև առևտրատնտեսական ու գիտատեխնիկական միջկառավարական հանձնաժողով**

Հաշվետու ժամանակահատվածում հանձնաժողովի նիստեր չեն գումարվել:

Վերոնշյալ միջկառավարական հանձնաժողովի աշխատանքները կարգավորող համաձայնագրի գործողության ժամկետը սպառվել է, Բուլղարիայի՝ 2007թ. հունվարի 1-ից Եվրամիության անդամ դառնալուց հետո:

Ներկայացվել է նոր համաձայնագրի նախագիծ, որը ներկայումս գտնվում է ներպետական ընթացակարգերի փուլում:

- **<u>Հայ-հունական</u> տնտեսական, արդյունաբերական և գիտատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողով**

Առևտրատնտեսական հարցերով հայ-հունական միջկառավարական հանձնաժողովի չորրորդ համատեղ նիստի Արձանագրության հանձնարարականների իրականացման նպատակով կայացել են երկու երկրների փորձագիտական խմբերի փոխայցելություններ: Դրանց ընթացքում կողմերը քննարկել են Հունաստանի

Հանրապետության կառավարության աջակցությամբ Հայաստանում տարբեր ոլորտների զարգացման ծրագրեր իրականացնելու վերաբերյալ հարցեր:

Հանձնաժողովի հերթական համատեղ նիստը նախատեսվում է անցկացնել Հունաստանում 2007 թվականի երկրորդ կիսամյակում:

- **<u>Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության</u> միջև տնտեսական և գիտատեխնիկական հարցերով միջկառավարական հանձնաժողով**

Հաշվետու ժամանակահատվածում հանձնաժողովի նիստեր չեն գումարվել:

- **Տնտեսական համագործակցության հարցերով <u>հայ-ուկրաինական</u> միջկառավարական հանձնաժողով**

Հաշվետու ժամանակահատվածում հանձնաժողովի նիստեր չեն գումարվել:

- **<u>Հայ-մոլդովական</u> միջկառավարական հանձնաժողով**

Հաշվետու ժամանակահատվածում հանձնաժողովի նիստեր չեն գումարվել:

- **<u>Հայ-թուրքմենական</u> միջկառավարական հանձնաժողով**

Հաշվետու ժամանակահատվածում հանձնաժողովի նիստեր չեն գումարվել:

- **Առևտրատնտեսական հարցերով <u>հայ-ղազախական</u> միջկառավարական հանձնաժողով**

Հաշվետու ժամանակահատվածում հանձնաժողովի նիստեր չեն գումարվել:

- **<u>Հայ-ղրղզական</u> միջկառավարական հանձնաժողով**

Հաշվետու ժամանակահատվածում հանձնաժողովի նիստեր չեն գումարվել:

- **<u>Հայաստանի Հանրապետության և Տաջիկստանի Հանրապետության</u> միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողով**

Հաշվետու ժամանակահատվածում հանձնաժողովի նիստեր չեն գումարվել:

- **<u>Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության</u> միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողով**

Հաշվետու ժամանակահատվածում հանձնաժողովի նիստեր չեն գումարվել:

- **<u>Հայ-սիրիական</u> միջկառավարական հանձնաժողով**

Շարունակվել են աշխատանքները հանձնաժողովի երրորդ նիստի արձանագրության հանձնարարականների կատարման ուղղությամբ: Ակտիվ համագործակցություն է ծավալվել գյուղատնտեսության բնագավառում: Ներկայումս, երկու երկրների իրավասու գերատեսչությունների միջև համագործակցություն է ծավալվել բնապահպանության, երկրաշարժագիտության, էներգետիկայի, ոռոգման համակարգերի բնագավառներում: Սիրիական կողմի հետ պայմանավորվածություն էր ձեռք բերվել հանձնաժողովի չորրորդ նիստը 2007 թվականի մարտի 26-29-ը Դամասկոսում անցկացնելու վերաբերյալ: Սակայն այն հետաձգվել է և ներկայումս նոր պայմանավորվածություն է ձեռք բերվել այն անցկացնել 2007թ. սեպտեմբերին Դամասկոսում:

- **<u>Հայ- լիբանանյան</u> միջկառավարական հանձնաժողով**

Հաշվետու ժամանակահատվածում հանձնաժողովի նիստեր չեն գումարվել:

- **<u>Հայ- ճապոնական</u> տնտեսական համագործակցության կոմիտե**

Հաշվետու ժամանակահատվածում հանձնաժողովի նիստեր չեն գումարվել:

- **<u>Հայաստան-Եվրամիություն</u> համագործակցության կոմիտե**

Հայաստան-Եվրամիություն համագործակցության կոմիտեի հերթական նիստը նախատեսվում է անցկացնել 2007թ. սեպտեմբերի 25-ին:

Ս.թ. ապրիլի 26-ին Երևանում տեղի է ունեցել ՀՀ-ԵՄ Գործընկերության և Համագործակցության Համաձայնագրի (ԳՀՀ) շրջանակներում գործող ***ՀՀ-ԵՄ առևտրի, տնտեսական և համապատասխան իրավական հարցերով համագործակցության ենթակոմիտեի*** հերթական 6-րդ նիստը:

Նիստը վարում էին համանախագահները՝ հայկական կողմից՝ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի տեղակալ Տիգրան Դավթյանը, եվրոպական կողմից՝ Եվրոպական Հանձնաժողովի արտաքին հարաբերությունների գլխավոր տնօրինության Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների բաժնի վարիչ Վիկտոր Անդրես Մալդոնադոն:

Նիստի աշխատանքներին մասնակցում էին ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի տեղակալը, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման, արտաքին գործերի, արդարադատության, գյուղատնտեսության նախարարությունների, ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության, մաքսային պետական կոմիտեի, ՀՀ մտավոր սեփականության գործակալության, Կենտրոնական բանկի, «Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ» հիմնադրամի ներկայացուցիչները, Եվրոպական հանձնաժողովի արտաքին հարաբերությունների և առևտրի գլխավոր տնօրինությունների աշխատակիցները, ինչպես նաև Եվրոպական հանձնաժողովի հայաստանյան գրասենյակի ղեկավարն ու ծրագրերի պատասխանատուները:

Քննարկվեցին ՀՀ և ԵՄ միջև կնքված Գործընկերության և համագործակցության համաձայնագրով նախատեսված տնտեսական օրենսդրության՝ ԵՄ և միջազգային /ԱՀԿ/ չափանիշներին համապատասխանեցման /մոտարկման/ ուղղությամբ տարվող աշխատանքները, Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում ՀՀ-ԵՄ Գործողությունների ծրագրի 2007թ. իրականացման գործընթացի հետ կապված հարցերը: Հայկական կողմը ներկայացրեց վերջին տարիների Հայաստանի մակրոտնտեսական զարգացումները, ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված աշխատանքները:

ՀՀ Առևտրի և տնտեսական զարգացման փոխնախարարը կարևորեց Հայաստանի առևտրատնտեսական հարաբերությունները ԵՄ-ի հետ, որը համարվում է մեր երկրի առաջին տնտեսական գործընկերը և որին բաժին է ընկնում Հայաստանի արտաքին առևտրի շուրջ 50 %-ը: Նշվեց, որ ավարտին են հասցվում Հայաստանին GSP+ [1] ռեժիմ տրամադրելու վերաբերյալ քննարկումները[2], բանակցվում են նաև ԵՄ-ի հետ Ազատ առևտրի համաձայնագիր /ԱԱՀ/ ստորագրելու և Հայաստանին շուկայական տնտեսության կարգավիճակ շնորհելու հնարավորությունները: Վերջինիս հետ կապված հարցի քննարկումը ձգձգելու վերաբերյալ հայկական կողմի դժգոհությանն ի պատասխան՝ ԵՀ-ի առևտրի ԳՏ ներկայացուցիչը պարզաբանեց, որ նման գործընթացները երկարատև են և, երբեմն, կարող են շարունակվել մինչև 7 տարի: Ինչ վերաբերում է հայկական կողմի խնդրանքին, ապա այն ԵՀ-ում ուսումնասիրվում է, և այդ նպատակով նախատեսված ԵՀ պատվիրակության այցը Հայաստան հետաձգվում է Հայաստանում խորհրդարանական ընտրությունների պատճառով /ամենայն հավանականությամբ՝ մինչև հունիս- հուլիս ամիսներ/: Ազատ առևտրի ռեժիմ տրամադրելու վերաբերյալ հարցի առնչությամբ տեղեկացվեց, որ ԵՀ-ը մտադիր է եվրոպական անկախ կոնսորցիումի միջոցով 2008թ. Հայաստանում անցկացնել տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրություն, որից հետո միայն համապատասխան եզրակացություն կարվի հետագա գործընթացի վերաբերյալ:

Կողմերն անդրադարձան նաև ստանդարտացման, տեխնիկական կանոնակարգերի, հավատարմագրման, մտավոր սեփականության խնդիրներին: Եվրոպական կողմին առաջարկվեց քննության առնել ԵՄ- Հայաստան առևտրի հետագա ընդլայնման նպատակով որոշակի խմբերի (գործարարների) համար ԵՄ երկրներ մուտքի արտոնագրերի պարզեցված ընթացակարգեր կիրառելու, ՓՄՁ Եվրոպական խարտիային Հայաստանի անդամակցության հնարավորութունները:

Եվրոպական հանձնաժողովի ներկայացուցիչները նշեցին մաքսային և հարկային ոլորտներում բարեփոխումների առավել արդյունավետ իրագործման անհրաժեշտության մասին՝ շեշտը դնելով հատկապես օրինախախտումների դեպքում պատժելիության կիրառման վրա: Այս առումով կարևորվեցին ոչ միայն տարբեր ոլորտներում անհրաժեշտ օրենսդրության մշակումն ու ընդունումը, այլ նաև դրա լիարժեք իրականացման ապահովումը, ինչպես նաև գործող օրենքների, քաղաքացիների պարտականությունների և իրավունքների վերաբերյալ հասարակության պատշաճ իրազեկումը: ՀՀ օրենսդրության մոտարկման ուղղությամբ կատարվող աշխատանքների մեջ առանձնացվեց արդարադատության նախարարության կառույցում ստեղծված թարգմանչական կենտրոնը, որը պետք է ապահովի ԵՄ իրավական փաստաթղթերի համարժեք թարգմանությունը:

---

[1] Զրոյական դրույքաչափով ապրանքներ արտահանելու արտոնություն

[2] Այս կապակցությամն ԵՀ-ի ներկայացուցիչը նկատեց, որ հայկական կողմը լիարժեք չի օգտվում GSP համակարգից:

Արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչը օրակարգի վերջին՝ այլ հարցեր և եզրակացություններ կետի տակ ներկայացրեց հայկական կողմի առաջարկությունը լրացուցիչ ենթահանձնաժողովներ /առաջին հերթին՝ քաղաքական և դատա-իրավական հարցեով/ ստեղծելու վերաբերյալ՝ այն հիմնավորելով ԵՄ-Հայաստան հարաբերությունների որակական նոր մակարդակով և քաղաքական, իրավական և այլ ոլորտներում երկկողմ քննարկման համար առկա հագեցած օրակարգով:

Ընդհանուր առմամբ եվրոպական կողմը դրական գնահատեց Հայաստանի կայուն տնտեսական աճի ապահովման, աղքատության կրճատման, արտահանման խթանման, ներդրումային միջավայրի բարելավման, ինչպես նաև հայաստանի օրենսդրությունը ԵՄ չափանիշներին համապատասխանեցնելու ուղղությամբ Հայաստանի իշխանությունների կողմից իրականացվող հետևողական քաղաքականությունը, համապատասխան միջոցառումների նպատակաուղղվածությունը և ընդգծեց դրանց կարևորությունը Հայաստանի հետագա տնտեսական զարգացման համար՝ նաև եվրաինտեգրման գործընթացի համատեքստում: Եվրոպական կողմը խոստացավ քննության առնել հայկական կողմի վերոնշյալ առաջարկները:

v ՏՐԱՍԵԿԱ միջկառավարական հանձնաժողով

Ս.թ. մարտի 31-ից ապրիլի 1-ը Անտալիայում կայացավ ՏՐԱՍԵԿԱ Միջկառավարական հանձնաժողովի /ՄԿՀ/ Ազգային ներկայացուցիչների հերթական հանդիպումը:

Հանդիպմանը մասնակցում էին ՏՐԱՍԵԿԱ ՄԿՀ բոլոր մասնակից պետությունները բացի Վրաստանից, ՀՀ-ից և Ուզբեկստանից /Ադրբեջան, Բուլղարիա, Թուրքիա, Ղազախստան, Ղրղզստան, Մոլդովա, Ռումինիա, Տաջիկստան, Ղրղզստան, Ուկրաինա/, Եվրոհանձնաժողովի ներկայացուցիչները:

Հանդիպման արդյունքում քննարկվեցին և համապատասխան որոշումներ կայացվեցին ֆինանսական, կազմակերպչական, իրավական, ինստիտուցիոնալ բնույթի խնդիրների վերաբերյալ:

Մասնավորապես քննարկվեցին նաև՝

1. **ՏՐԱՍԵԿԱ Միջկառավարական հանձնաժողովի բյուջեն.**

- Ամփոփվեց ՄԿՀ Մշտական քարտուղարության 2006թ. բյուջեն, մասնավորապես կոչ արվեց Ուզբեկստանին և Ուկրաինային արագացնել իրենց 2006թ. անդամավճարների մնացորդների մարումը,

- Որոշում կայացվեց նաև 2007թ. բյուջեի աուդիտն իրականացնել մայիսի սկզբին, ինչպես նաև այդ ընթացքում աուդիտորների քննարկմանը ներկայացնել 2008թ. բյուջեի նախագիծը:

2. **ՏՐԱՍԵԿԱ ՄԿՀ-ի Հայեցակարգ մինչև 2015թ. «Եվրոպա-Կովկաս-Ասիա» միջազգային տրանսպորտային միջանցքի զարգացման.**

-Քննարկվեց «Եվրոպա-Կովկաս-Ասիա» միջազգային տրանսպորտային միջանցքի զարգացման ՏՐԱՍԵԿԱ ՄԿՀ Հայեցակարգի նախագիծը, որի վերաբերյալ Եվրոհանձնաժողովը պետք է հատուկ կարծիք տրամադրի հետագայում: Այդ փաստաթուղթը հաստատելու նպատակով կներկայացվի ՏՐԱՍԵԿԱ ՄԿՀ 6-րդ նախարարական հանդիպմանը:

3. **ՏՐԱՍԵԿԱ ՄԿՀ 2007-2009թ. Գործողությունների ծրագիր.**

- Որոշում է ընդունվել Բրյուսելում կազմակերպել հանդիպում Եվրոհանձնաժողովի ներկայացուցիչների հետ Գործողությունների ծրագրում առաջնային միջոցառումները որոշելու համար:

ՏՐԱՍԵԿԱ ՄԿՀ 2007-2009թ. Գործողությունների ծրագիրը կներկայացվի ՏՐԱՍԵԿԱ ՄԿՀ տարեկան նախարարական հանդիպման հաստատմանը:

4.Բուլղարիայի և Ռումինիայի ազգային ներկայացուցիչների համատեղ հայտարարությունը ս.թ. մարտին Սոֆիայում կայացած հանդիպման վերաբերյալ.

- Նկատի առնելով, որ ս.թ. հունվարի 1-ից Բուլղարիան և Ռումինիան արդեն իսկ դարձել են Եվրամիության անդամ՝ ս.թ. մարտի 8-9-ը Սոֆիայում կայացել է երկկողմ հանդիպում /Բուլղարիա-Ռումինիա/, որը նպատակ ուներ պարզելու հետագայում այդ երկրների անդամակցությունը ՏՐԱՍԵԿԱ ՄԿՀ-ին:

Ազգային ներկայացուցիչների հերթական հանդիպման ընթացքում Բուլղարիայի և Ռումինիայի ներկայացուցիչները հանդես եկան համատեղ հայտարարությամբ՝ հայտնելով, որ հետաքրքրված են հետագայում անդամակցել ՏՐԱՍԵԿԱ ՄԿՀ-ին, ինչի վերաբերյալ առկա է նաև իրենց երկրների քաղաքական կամքը:

-Նկատի ունենալով, որ Եվրամիությանը անդամակցելուց հետո Բուլղարիան և Ռումինիան արդեն իսկ պարտավոր են կիրառել բոլոր այն օրենքները որոնք գործում են Եվրամիության տարածքում, այդ թվում նաև կապված մաքսային ձևակերպումների և ավելացված արժեքի հարկի հետ, որոշում է ընդունվել կազմակերպել հատուկ հանդիպում Բրյուսելում Եվրոհանձնաժողովի ներկայացուցիչների հետ «Եվրոպա-Կովկաս-Ասիա միջանցքի զարգացման միջազգային տրանսպորտի մասին» Հիմնական բազմակողմ համաձայնագրում համապատասխան լրացումների Արձանագրության նախագիծ պատրաստելու համար: Արձանագրության վերջնական տեքստը կներկայացվի ՏՐԱՍԵԿԱ ՄԿՀ տարեկան նախարարական հանդիպման հաստատմանը

5. ՏՐԱՍԵԿԱ ՄԿՀ-ին կից Գործարար կոնսուլտատիվ խորհրդի ստեղծման մասին.

-Հանդիպման ընթացքում Մշտական քարտուղարությունը ներկայացրել է առաջարկություն ՏՐԱՍԵԿԱ ՄԿՀ-ին կից Գործարար կոնսուլտատիվ խորհրդի ստեղծման մասին:

Այս հարցը տեղափոխվել է մյուս հանդիպում, ուր Ազգային ներկայացուցիչների հանձնարարությամբ Մշտական քարտուղարությանը պետք է ներկայացնի համապատասխան Արձանագրության նախագիծ:

Պետք է նշել, որ ՏՐԱՍԵԿԱ ՄԿՀ 6-րդ տարեկան նախարարական հանդիպումը կկայանա ս.թ. աշնանը, որի ընթացքում կքննարկվի նաև 2008թ. նախատեսվող Գագաթաժողովի անցկացմանը վերաբերող հարցեր

Հաշվետու ժամանակահատվածում համագործակցության աշխուժացում չեն գրանցել և նիստ չեն գումարել հետևյալ միջկառավարական հանձնաժողովները.

- Հայ-ուկրաինական միջկառավարական հանձնաժողով
- Հայ-բելառուսական միջկառավարական հանձնաժողով
- Հայ-մոլդովական միջկառավարական հանձնաժողով
- Հայ-ղազախական միջկառավարական հանձնաժողով
- Հայ-ղրղզական միջկառավարական հանձնաժողով
- Հայ-տաջիկական միջկառավարական հանձնաժողով
- Հայ-թուրքմենական միջկառավարական հանձնաժողով
- Հայ-լիբանանյան միջկառավարական հանձնաժողով
- Հայ-սիրիական միջկառավարական հանձնաժողով
- Հայ-լեհական միջկառավարական հանձնաժողով
- Հայ-ռումինական միջկառավարական հանձնաժողով
- Հայ-բուլղարական միջկառավարական հանձնաժողով
- Հայ-ճապոնական տնտեսական համագործակցության կոմիտե